

Օպամայի Յայտարարութիւնն Իր Բնոյթով Ճանաչում Է Հայոց Յեղասպանութեան

Հայոց Յեղասպանութեան 100-րդ տարելիցին նուիրուած չիշատակի միջոցառումներէն յետոյ հայ - թրքական շարքերու թիւններու զարգացման հեռանկարին նուիրուած քննարկումներ տեղի ունեցած են Ուոշինգթընի «Քարնիկի» վերլուծական հաստատութեան գրասենտակէն ներս:

Ըստ «Ամերիկայի Չայնի», քննարկումներու մասնակիցները կարծիք յայտնած են, որ ամբողջ աշխարհի տարածքին եւ յատկապէս Հայաստանի միջոցառումները հայ ժողովրդին որոշ չափով ոգեշնչեցին:

«Քարնիկի» հաստատութեան Ռուսաստանի եւ Եւրասիայի ծրագրերու ղեկավար Թոմ Տը Վալը ըսած է, որ Միացեալ Նահանգներու նախագահ Պարաք Օպամայի յայտարարութիւնը իր բնոյթով ճանաչում է Հայոց Յեղասպանութիւնը՝ առանց Յեղասպանութիւն բառը օգտագործելու:

«Միանշանակ, այդ մարդու մը յայտարարութիւնն է, որ անձամբ հաստատ կը հաւատայ, որ Հայոց Յեղասպանութիւնը իսկապէս տեղի ունեցած է, ու ան կ'ուզէ օգտագործել այդ բառը, սակայն քաղաքական պատճառով որոշած է այդ չընել», - շեշտած է Տը Վալը:

Վերլուծաբանը խորհուրդ տուած է ուշադիր հետեւելու Թուրքիոյ մէջ Յունիսին կայանալիք խորհրդարանական ընտրութիւններու արդիւնքներուն, որոնցմէ, որոշ չափով կախուած է նաեւ հայ - թրքական հարաբերութեան ապագան: Մասնաւորապէս, եթէ ընտ-

րութիւններուն մասնակցող քրդական կուսակցութիւնը յաջողի յաղթահարել 10 տոկոսի շեմը, այդ կուսակցութիւնը կրնայ զգալիօրէն նպաստել Հայաստանի հետ յարաբերութիւններու բարելաւմանը:

«Թուրքիոյ քուրդ համայնքը Հայոց Յեղասպանութիւնը բառակապակցութիւնը թէեւ տակաւին չօգտագործեր, սակայն լուրջ յառաջընթաց ապրած է այդ հարցով եւ ներողութիւն խնդրած է հայերէն» 1915-ին գործածի համար», - ըսած է Թոմ Տը Վալը:

Վերլուծաբան Էմիլ Սանամեանի կարծիքով, 100-ամեակի միջոցառումները ցոյց տուին հայերու միասնութիւնը: «Այս միջոցառումներէն յետոյ հայերը իրենց պահանջներուն մէջ, անշուշտ, աւելի ինքնավստահ կը դառնան», - ըսած է ան:

Վերլուծաբանի կարծիքով, դատական գործընթացները կրնան նոր թափ ստանալ, սակայն անոնք չեն կրնար փոխարինել քաղաքականին:

Քաղաքական գործընթացներուն անդրադառնալով՝ համալսարանի դասախօս՝ Հենրի Բարքըլը, որ ԱՄՆ-ի Պետական Քարտուղարութեան քաղաքական ծրագրերու բաժինէն ներս աշխատած է, ուշադրութիւն հրաւիրեց այն փաստի վրայ, որ թէեւ Միացեալ Նահանգներու նախագահ Պարաք Պրաման Հայոց Յեղասպանութիւնը բառակապակցութիւնը չօգտագործեց, սակայն սուր քննադատութեան արժանացաւ պաշտօնական Անգարայի կողմէ:


Ֆրենք Փալոն. Միացեալ Նահանգները Պէտք Չէ Ռազմական Օգնութիւն Տրամադրէ Ատրպէյճանին

Միացեալ Նահանգներու Գոնկընի հայկական հարցերով Խորհրդարանական Յանձնախումբի համանախագահ Ֆրենք Փալոն «Ամերիկայի Չայն»-ին տուած հարցազրոյցի ընթացքին ըսած է թէ, Միացեալ Նահանգները պէտք չէ ռազմական օգնութիւն տրամադրէ Ատրպէյճանին, անոր որդեգրած յարձակողական եւ ռազմատենչ կեցուածքին պատճառաւ:

«Տարուայ ընթացքին մենք բազմաթիւ միջոցառումներ կը նախատեսենք: Այս ժամանակահատուածին, երբ ծախսերու մասով օրինագիծեր կ'ընդունուին, կը փորձենք հասնիլ ԱՄՆ-ի կողմից Հայաստանին, ինչպէս նաեւ Ղարաբաղին աւելի մեծ օգնութիւն տրամադրման», - ըսած է գոնկընիսականը:

Խօսելով հայ - ատրպէյճանական հակամարտութեան մասին, Փալոնը մատնանշած է որ, Ատրպէյճանի յարձակողական ու ռազմատենչ կեցուածքը՝ իբրեւ խաղաղութեան հիմնական խոչընդոտ:

«Չանքեր կը գործադրենք վերացնելու Ատրպէյճանին տրամադրուող ֆինանսաւորումը եւ ռազմական աջակցութիւնը: Մենք մտահոգուած ենք, որ որեւէ ռազմական օգնութիւն կրնայ ուղղուիլ Հայաստանի դէմ, քանի որ Ատրպէյճանը



Գոնկընական Ֆրենք Փալոն

մշտապէս կը սպառնայ յարձակիլ Հայաստան վրայ, եւ ուստի մենք կը կարծենք, որ ԱՄՆ պէտք չէ ռազմական օգնութիւն տրամադրէ Ատրպէյճանին», - շեշտած է գոնկընիսականը:

Փալոն յայտարարած է, որ գոնկընիսի հայկական հարցերով Յանձնախումբը կը փորձէ նաեւ

Շաբ.ը էջ 4

Սուրիահայ Համայնքի Ղեկավարները Դեմ Են Հայերու Չանգուածային Արտահանման

Սուրիոյ Առաքելական, Կաթողիկէ եւ Աւետարանական՝ երեք հայկական եկեղեցիներու համայնքապետերու եւ երեք կուսակցութիւններու ղեկավարներու որոշումն է՝ Հալէպէն հայերու միասնական ու զանգուածային դուրս փոխադրում չկազմակերպել, «Ազատութեան» հետ զրոյցի ընթացքին ըսած է Հայ Աւետարանական համայնքի ղեկավար, վերապատուելի Յարութիւն Սելիմեան, որ կարճատեւ այցով Հայաստանում կը գտնուի:

Ան աւելցուցած է, որ պատրաստ են օգնել առանձին ընտանիքներու, որոնք պատերազմի պատճառով հեռանալու ցանկութիւն ունին. - «Բայց եթէ զանգուածային գաղթ կամ տեղահանութիւն կազմակերպենք, կրնանք պատմութեան առջեւ պատասխանատու ըլլալ»:

Սելիմեանի համաձայն, նման բարդ որոշում կայացնելու համար երեք հիմնական գործօն պէտք է հաշուի առել. նախ այն, որ Հալէպը ողջ աշխարհի մէջ հայկական մշակութիւնը լեզուի պահպանման կենդրոններէն մէկը եղած է ու այն վերացնել չեն փափաքիր: Բացի այդ, հայկական համայնքի ղեկավարները կը կարծեն, որ ազնիւ չէ դժուար պահին լքել Սուրիան, որ ժամանակին ապաստան տուած է

Եղեռնէն փրկուած հազարաւոր հայերու:

Չորս տարի շարունակուող պատերազմի պատճառաւ, երբեմնի բարեկեցիկ համայնքի 60-70 տոկոսը արդէն հեռացած է, պատմած է վերապատուելի Սելիմեան. - «Մնացողները մեզի համար մեր ճիտին պարտքն է, ինչպէս կ'ըսեն: Չենք կրնար յոխորտալ, որ ամէն ինչին լաւը, բաւարար ունինք. որքան կարելի է՝ այդքան բոլորին հաւասարապէս կը բաժանենք»:

Անցեալ տարի Հայաստան տեղափոխուած սուրիահայ գրող Յակոբ Միքայէեանը հարցը դրած է այլ ձեւով. «Իսկ եթէ համայնքի ղեկավարները յայտարարէին, որ ցանկանում են բոլորին տարհանել Հայաստան, իշխանութիւնները կարողանալու էին հոգալ այս մարդկանց կեցութեան ծախսերը. - «Հայաստանի կառավարութիւնը Հալէպի տասը հազար-քսան հազար հոգին այստեղ պիտի բերի... Իր մէկուկէս միլիոն ժողովուրդը թողեց գնաց՝ նրանց մասին որեւէ մէկը մտահոգութիւն չարտայայտեց, չսասց՝ մի գնացէք, ձեզ գործ կ'ապահովենք, ֆաբրիկաներ կը բացենք: Անդադար եկեղեցիներ են սարքում, ոեւէ մէկը գործարան չի սարքում, որի մէջ մի քանի հարիւր հոգի աշխատի եւ փրկուի»:

Դավութբոլլուն Գերմանիային Խորհուրդ Տուած Է Թուրքերուն Պատմութեան Դասեր Չտալ

Թուրքիոյ վարչապետ Ահմէտ Դավութբոլլուն իր նախընտրական արշաւի շրջագիրէն ներս այցելած է Գերմանիոյ Տորստունթ քաղաքը եւ հոն իր ունեցած ելոյթին մէջ քննադատած է Հայոց Յեղասպանութեան հարցով Գերմանիոյ դիրքորոշումը, կը գրէ գերմանական մամուլը:

Մայիսի 3-ին, Թուրք վարչապետը մի քանի հազար թուրքերու առջեւ նախընտրական ճառ արտասանելով ըսած է. «Այդ մասին ես շատ յաճախ խօսած եմ տիկին Մերկելի (Գերմանիոյ վարչապետ Անխելա Մերկել Ն.) հետ եւ այդ դիրքորոշումը ներկայացուցած եմ Գերմանիոյ խորհրդարանին: Եթէ մէկը կ'ուզէ փորձել մեզ այսպէս կոչուած Յեղասպանութեան մասին պատմել եւ պատմութեան դասեր տալ, ապա մենք անոր այսպէս կը պատասխանենք. «Մենք հայերու եւ Անատոլիայի այլ ազգերու հետ միասին ապրած ենք: Մենք գիտենք, թէ ինչպէս պէտք է անոնց հետ խօսինք ու ինչպէս պիտի



Թուրքիոյ վարչապետ Ահմէտ Դավութբոլլու

մօտեցնենք պատմութիւնը: Մենք թոյլ չենք տար մարդոց, որոնք չեն կրնար սեփական պատմութեան հետ առեւտրուիլ, մեզ մեր պատմութիւնը սորվեցնեն կամ մեր արժէքները հարցականի տակ դնեն», - ըսած է Դավութբոլլու:

Յայտնենք, որ Թուրքիոյ մէջ խորհրդարանական ընտրութիւններ պիտի կայանան Յունիս 7-ին:

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

Սերժ Սարգսեանին ձեռնադրու անդորր

ԱՆԻ ՍԱՀԱԿԵԱՆ

Սահմանադրական բարեփոխումների նախնական հայեցակարգի հրապարակումից յետոյ նախագահ Սերժ Սարգսեանի յայտարարութեան համաձայն՝ սահմանադրական բարեփոխումների մասնագիտական յանձնաժողովի առջեւ խնդիր է դրուած բարեփոխումների նախագծի մշակմանը գուցէ թաց քաղաքական կուսակցութիւնների հետ կազմակերպել եւ իրականացնել քննարկումներ: Նաեւ ամփոփել կուսակցութիւնների առաջարկութիւններն ու դիտողութիւնները: Առաջարկների համար վերջնաժամկէտ է սահմանուած Մայիսի 5-ը, մինչեւ այդ օրը քաղաքական ուժերը պէտք է տրամադրեն իրենց մօտեցումները: Սակայն հաշուած օրեր են մնացել եւ որեւէ ընդդիմադիր ուժ առաջարկ չի ներկայացրել:

Մօտ երկու ամիս առաջ նախագահ Սերժ Սարգսեանը սահմանադրական բարեփոխումների հարցի վերաբերեալ հանդիպումներ ունեցաւ 7 կուսակցութիւնների ղեկավար կազմի, այդ թւում՝ «Բարգաւաճ Հայաստանի» հետ,

րութիւնը, որ չի բացառուած քննարկումների ու մշակումների արդիւնքում սեղանին դրուի երկու փաթեթ՝ մէկը կիսանախագահական բարեփոխուած համակարգի, միւսը՝ խորհրդարանական համակարգի վերաբերեալ: Այս պարագայում բարեփոխումների դէմ նախկինում մարտնչողներից շատ բան չի պահանջուի, նրանք ներսում մի փոքր կուր կը տան, ՀՀԿ-ականներին մի քանի յորդոր, խելք ու խրատ, որպէսզի քուէարկեն խորհրդարանական մոդելին դէմ, սակայն խորհրդարանի մեծամասնութեան եւ ՀՅԴ-ի միջոցով կ'անցնի հենց այդ տարբերակը, որի համար Սերժ Սարգսեանի իշխանութիւնը տարիների յամառ ջանքեր մղեց: Սրանից յետոյ էլ խորհրդարանական ընդդիմութիւնը չի համաձայնի, որ իր լուծութեամբ ու գործընթացի դէմ չընդվզելով, նախապէս լայն գանգուածներ ոտքի չհանելով ըստ էութեամբ ապահովեց լայն կոնսոլիդացիա: Նրանք, որոնք իբր դէմ են խորհրդարանական համակարգին, այդ դժգոհութիւնը կը փորձեն ծառայեցնել յաջորդիւ սպասուող խորհրդարանական ընտրութիւն-

Չի բացառոււմ քննարկումների ու մշակումների արդիւնքում սեղանին դրուի երկու փաթեթ՝ մէկը կիսանախագահական բարեփոխուած համակարգի, միւսը՝ խորհրդարանական համակարգի վերաբերեալ

որի ներկայացուցիչները մինչ այդ կտրականապէս դէմ էին արտայայտուած այս նախաձեռնութեանը: Ամիսներ շարունակ նախկին առաջնորդ Մառուկեանի գլխավորութեամբ «Բարգաւաճ Հայաստանը» քննադատում էր սահմանադրական բարեփոխումները, մերժում էր այս հարցը քննարկման դնելու ցանկացած առաջարկ, պնդելով, որ իրականում իշխանութիւնն ընդամէնը վերադարձուած ինքնին է լուծուած: Այս հարցն էր, որ ի վերջոյ պատուհաս դարձաւ եւ շրջադարձային հանգուցալուծում գտաւ այս կուսակցութեան եւ նրա առաջնորդի կեանքում: Սերժ Սարգսեանի հետ յայտնի հանդիպումից յետոյ կանխատեսումներ հնչեցին, որ բարեփոխումներն այլեւս կայացած իրողութիւն են եւ ՀՀ նախագահին յարողութեան հետ ձեռնարկել ԲՀԿ-ին ճնշելով՝ ամիս մէջ բերել նաեւ միւսներին եւ ձեւաւորել կոնսոլիդացիան, որն այս բարեփոխումների իրականացման համար պահանջում է վենետիկի յանձնաժողովը:

Սերժ Սարգսեանի հետ հանդիպում ունեցած որոշ ուժեր, իհարկէ, հակադրուեցին այդ կարծիքներին, ասելով, որ հանդիպումը չի նշանակում համաձայնութիւն, այդուհանդերձ նրանց այսօրուայ պահմութիւնը այլ բան չի նշանակում, քան լուծութեան մատնել իրենց կողմից նախկին չարք հռչակուած այս փոփոխութիւնները: Հայրենի ընդդիմադիրների համար մաների դաշտ է ապահովել նաեւ Սերժ Սարգսեանի այն յայտարար-

ներին: Օրինակ ԲՀԿ խմբակցութեան պատգամաւոր Միքայէլ Մելքումեանը մեզ հետ գրոցում վերահաստատեց ԲՀԿ-ի մօտեցումն այս հարցում, թէ իրենք հիմա էլ շարունակում են դէմ լինել խորհրդարանական համակարգին «Արտաքին եւ ներքին վտանգներից ելնելով մենք հիմա նպատակաշարժար չենք համարում այդ փոփոխութիւնը» ասաց նա՝ չպատասխանելով, թէ ինչ է պատրաստուած ձեռնարկել ԲՀԿ-ն, որպէսզի իշխանութիւնը հնարաւորութիւն չունենայ իրականացնել այդ փոփոխութիւնը՝ «Մենք սպասում ենք, տեսնենք ինչ են բերում խորհրդարան, միգուցէ իշխանութիւնն էլ է հրաժարուել այդ մտադրութիւնից եւ կիսանախագահական մոդելին է մնում»:

ԲՀԿ-ն կը կողմնորոշուի, երբ Սերժ Սարգսեան յստակ դիրքորոշում յայտնի, արմատական ՀԱԿ-ն անգամ չի ընդվզում այս գործընթացի դէմ, նա էլ սպասում է իշխանութեան ընտրութեանը, այս մասին էլ յայտարարում է Լեւոն Զուրաբեանը, նոյն մեկնաբանութիւնն է լուծում նաեւ ժառանգութեան կողմից, բայց բոլորին է պարզ, որ ընդդիմադիր դաշտի այս անդորրը եւ մեղմ ասած անգէն վիճակը ոչնչով չի կարող ներազդել Սերժ Սարգսեանի դիրքորոշման վրայ եւ նման պարագայում նա կարող է այնպիսի որոշում կայացնել, ինչպիսին ինքն է ուզում:

«ՀԱՅԵԼԻ»

Արցախի ընտրութեանը յաջորդած ուշագրաւ որոշումը

ՅԱԿՈՐԲԱԴԱԼԵԱՆ

«Ռեժիմը» որոշեց ազատ արձակել Հիմնադիր խորհրդարանի կալանաւորուած անդամներին: Առաջին հայեցքից այդ որոշումը պայմանաւորուած է նրանով, որ Ապրիլի 24-ը հետեւում է, հետեւաբար այլեւս չկայ ՀԽ անդամներին բանտում պահելու կարիք: Յատկանշական է նաեւ, որ հետեւում է մէկ այլ իրադարձութիւն, որը ՀԽ անդամների ձերբակալման ու կալանքի իմաստով չէր շօշափուած՝ Արցախի խորհրդարանի ընտրութիւնը:

Բանն այն է, որ ՀԽ գործունէութեան եւ դրա հանդէպ իշխող համակարգի վերաբերմունքի առումով Արցախն ունէր ուշագրաւ ներգրաւում: Հենց Բերձորում տեղի ունեցած միջադէպը բաւական հանգուցային էր ՀԽ-ի իշխող համակարգ յարաբերութեան տեսանկիւնից:

Այդ միջադէպը բացեց թէ Հայաստանում, թէ Արցախում դերակատարում ունեցող սուբեկտների ու ՀԽ փոխյարաբերութեան տարբեր դրուագներ ու շերտեր: Դրանք վկայեցին ՀԽ եւ իշխող համակարգի փոխյարաբերութեան ամբողջ բարդութիւնն ու բազմաշերտութիւնը, ցոյց տալով, որ ի տարբերութիւն ընդդիմադիր դաշտում գործունէութիւն ծաւալած այլ սուբեկտների, այս դէպքում կան որոշակի առանձնատկութիւններ, եւ իշխանութեան համար առաւել քան կարեւոր է իրադարձութիւնների զարգացումը հնարաւորինս արագ բերել հայաստանեան քաղաքական կեանքի համար ընդունուած տրամաբանութեան շրջանակ:

Բերձորը փաստացի դարձաւ այդ ամենի կատալիզատորը, եւ այդ տեսանկիւնից ուշագրաւ է նաեւ, որ ՀԽ անդամներին Ապրիլի 24-ից առաջ չէզոքացնելուց յետոյ, նրանց ազատ են արձակուած Արցախի խորհրդարանի ընտրութիւնից յետոյ:

Այստեղ ինդիքն այն է, որ ՀԽ-ն կարող էր անմիջական դերակատարում ունենալ Արցախում, թէեւ այնտեղ դեռեւս Բերձորից առաջ մի շարք գործիչներ յայտարարեցին ՀԽ-ի համակիր լինելու մասին: Խնդիրն այն է, որ ՀԽ նախաձեռնած գործընթացն իր մէջ կամայ թէ ակամայ ներառում ու շօշափում էր Հայաստանի իշխող համակարգի համար մի շարք էական հանգամանքներ՝ կապուած ներհամակարգային օրգանական ներդաշնակութեան խափանման իրողութիւնների հետ:

Այդ առումով Արցախը առանձին չէ, յատկապէս այժմ, երբ այնտեղ խորհրդարանի ընտրութեամբ նոր իշխանութեան ձեւաւորման գործընթաց է սկսուած՝ Արցախի հակամարտութեան կարգաւորման գործընթացում բանակցային ֆորմատի ու բովանդակութեան թարմացման շօշափելի միտումների ու մտադրութիւնների նախաձեռնմանը գուզահեռ:

ՀԽ ձերբակալումն իհարկէ միայն Ապրիլի 24-ի հարց է, որ թերեւս լուծել է: Ամէն դէպքում ողջունելի է, որ կալանաւորուածներն այժմ ազատութեան մէջ են: Սակայն բանն այն է, որ Հիմնադիր խորհրդարանի նախաձեռնած գործընթացը ներկայումս յայտնուել է Հայաստանի ներքաղաքական կեանքի համար «ընկանոն» տրամաբանութեան մէջ: Իսկ դա վկայում է, որ «ռեժիմն» այլեւս չի վախենում:

Իհարկէ, դա չի էլ նշանակում, որ կալանքը վախի վկայութիւն էր: Աւելի ճիշտ է ասել, որ կալանքն ու ազատութիւնը որքան էլ գեղարուեստական առումով աբսուրդի ժանրի, քաղաքական տեսանկիւնից համակարգի ազատ մաների վկայութիւնն է: Դա նշանակում է, որ համակարգը քաղաքական ցիկլ է փակում եւ պատրաստուած է նորին:

Ակնյայտ է, որ արդէն փակուող ցիկլում որեւէ սուբեկտ չկարողացաւ համարժէք լինել արտաքին ու ներքին իրողութիւններին ու իշխանութեան առաջ դնել բարդ խնդիրներ, որոնք հնարաւոր չլինէր լուծել աւանդական մեխանիզմներով: Պէտք է նկատել նաեւ, որ կային սուբեկտներ, որոնք առաւել ողջախոհ գտնուելով ու ռացիոնալ հաշուելով, հրաժարուեցին իշխանութեանը որեւէ խնդիր առաջադրելուց, գերադասելով ինդիքներ առաջադրել իրենք իրենց:

Ներկայումս հարցն այն է, թէ ինչքանով են ազատութեան մէջ գտնուող սուբեկտները նոր ցիկլում ունակ լինելու համարժէք գտնուել կամ իշխանութեան առաջ, կամ իրենց առաջ դրուելիք խնդիրներում: Ստեղծուել է մի իրավիճակ, որ արտաքին ու ներքին մարտահրաւէրների առումով խնդիրների առաջադրման կամ գոնէ ձեւակերպման տեսանկիւնից առաւելագոյն համարժէքութիւն ցուցաբերել է Շանթ Յարութիւնեանը, որը շարունակում է մնալ անազատութեան մէջ:

«ԼՐԱԳԻՐ»

ՄԱՍԻՍ
ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ
ՄՈՑԻԱԼ ԴԵՄՈՒԿՐԱՏ ԶՆՁԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Մրջանի
ԽՍԲԱԳԻՐ
SOPEA. ՄՐՇԱԿ ԳԱԶԱՆԾԵԱՆ
ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԻՆ
ԼԵՆԱ ՄԱՆՈՒԿԵԱՆ
MASSIS Weekly
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E-Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com
(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August
ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA \$50.00, \$100.00 (First Class)
Canada \$125.00 (Air Mail)
Overseas \$250.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.
Periodicals Postage Paid at Pasadena CA.
Please Send Address Change To MASSIS WEEKLY

Յրատարակելով հայաստանեան մամուլին մէջ լոյս տեսնող տարբեր յօդուածներ «ՄԱՍԻՍ» ամսականում չի բաժնէր հոն արտայայտուող բոլոր միտքերը

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Հիմնադիր խորհրդարան»-ի Հինգ Անդամներն Ազատ Արձակուեցին



Հիմնադիր Խորհրդարանի անդամները գատ արձակուել են

Մայիս 5-ին, «100-ամեակն առանց ռեժիմի» շարժման առաջնորդ ժիրայր Սեֆիրեանը, «Հիմնադիր խորհրդարան»-ի անդամներ Պալել Մանուկեանը, Վարուժան Ալեքսանյանը, Գեորգ Սաֆարեանը եւ Հիմնադիր Գարեգին Զուգասեանն ազատ արձակուեցին «Վարդաշէն» եւ «Նուբարաշէն» քրէականատարողական հիմնարկներին:

Գատախազութիւնը որոշեց փոխել նրանց նկատմամբ խափանման միջոցը՝ հիմնադրելով՝ արդէն անցել է Հայոց մեծ եղեռնի զոհերի յիշատակման օրը, եւ վերոնշեալ անձինք չեն կարողացել աւարտին հասցնել յանցագործութիւնը:

Գլխաւոր դատախազութեան յատկապէս կարեւոր գործերով քննութեան վարչութեան դատախազ Վահագն Պօղոսեանը «Ազատութեան» հետ գրոյցում ասաց՝ ընդդիմադիր գործիչներին կալանքի տակ պահելու անհրաժեշտութիւն այլեւս չկայ:

«Հիմնադիր խորհրդարան»-ի անդամները մեղադրանքը որակում են որպէս անհեթեթութիւն: «Պայքարը շարունակելու ենք», - ազատ արձակումից րոպէներ անց յայտարարեց ժիրայր Սեֆիրեանը:

«Ամբողջ գործը խեղկատալութիւն է, ծայրից ծայր թատրոն է: Առաջիկայ օրերին կը բացենք փակագծերը, եւ բոլորն էլ թատրոնին ակնատես կը լինեն: Մեր ընթացքը կարող են ընդամէնը դանդաղեցնել, բայց կասեցնել՝ նրանց չի յաջողուի: Ուշ թէ շուտ, մեզ յաջողուելու է էս յանցաւոր ռեժիմից ձերբազատուել: Յեղա-

փոխական դատական ուղով ենք անցնում, մեր կողմից ուղուց շեղում չի ինելու, իրենք թող մտածեն իրենց ապագայի մասին», - ասաց Սեֆիրեանը:

Կալանավայրում տասնօրեայ հացադուլը օրերէս դադարեցրած Գեորգ Սաֆարեանն ասաց՝ իրեն արդէն լաւ է զգում, հաստատեց, որ կալանավայրում իր նկատմամբ ճշտումներ են եղել, բայց մանրամասներ չհաղորդեց. խոստացաւ այդ մասին աւելի ուշ խօսել:

Երկու օր առաջ ընդդիմադիրներին ազատ արձակելու կոչով պաշտօնական Երեւանին էր դիմել հեղինակաւոր Human Rights Watch կազմակերպութիւնը:

Փաստաբանի խօսքով, անցած երեք շաբաթներին իրաւապահները մեղադրանքը հիմնաւորող փաստեր չեն ներկայացրել: «Հակասութիւն կայ քննչական մարմինների ու դատախազութեան գործողութիւններում», - ասաց Գրիգորեանը:

«Եղել է քաղաքական պատուէր՝ ձերբակալել, այժմ վերելից իջել է քաղաքական պատուէր՝ նրանց ազատ արձակել, եւ որեւէ քննչական մարմին, որեւէ դատախազական մարմին, որեւէ հետաքննական մարմին չի կարող հակադրուել այդ պատուէրին:

Այսօր՝ նրանց ազատ արձակուելու օրը, կարելի է ասել, որ այդ մեղադրանքը նրանց վրայից հանուած է, եւ համարել նրանց ազատ արձակումը ինդիքի լուծում, մէկընդմիջ չի կարելի, որովհետեւ էդ մարդիկ որեւէ յանցանք չեն գործել, եւ ոչ մի ժամ, ոչ մի վարկեան չպէտք է բանտում լինէին», - ասաց Յարութիւնեանը:

Սերժ Սարգսեանը Զգիտի՝ Ինչպէս Վարուել Գալուստ Սահակեանի Հետ

«Ժողովուրդ» թերթը գրում է. «Սերժ Սարգսեանը չգիտի՝ ինչպէս վարուել ՀՀ ԱԺ նախագահ Գալուստ Սահակեանի հետ, որը խորհրդարանում անխուով քննուեց եւ պատգամաւորների ազգանունները դժուարութեամբ ընթերցելուց բացի՝ հիմա էլ իր անհեթեթութիւններով դուրս է եկել միջազգային ասպարէզ: Բանն այն է, որ նա ընդունել է Հարաւային Օսիայի ինքնահռչակ հանրապետութեան խորհրդարանի խօսնակ Անատոլի Բիբլիովին:

Իհարկէ, ԱԺ նախագահն այդ հանդիպումը ձեւակերպել է որպէս «մասնաւոր» այց, բայց միւս կողմն այն ներկայացրել է իբրեւ աշխա-

տանքային հանդիպում եւ քննարկում՝ հրապարակելով իր եւ Գրիգորի լուսանկարները: Բնականաբար այդ փաստը խիստ զայրացրել է պաշտօնական վրաստանին, եւ այնտեղ ՀՀ-ից պարզաբանում են ակնկալում:

«Ժողովուրդ»-ի տեղեկութիւններով՝ իշխանական կուլիսներում քննարկում էին իրավիճակից դուրս գալու ելքերը, եւ չի բացաւուում՝ առաջիկայ օրերին ԱԺ ղեկավարութիւնը այցելի Թբիլիսի՝ տեղում իրավիճակը հարթելու համար: Ի դէպ, վրաստանի ԱԳՆ կոշտ յայտարարութիւն է տարածել Արցախում կայացած ԱԺ ընտրութիւնների վերաբերեալ»:

Ամենաշրջադարձայինն այն է, որ Թուրքիայում 20%-ը պատրաստ է ճանաչել Ցեղասպանութիւնը

Ժողովրդավարութեան եւ համազորակցութեան ինստիտուտի նիւտրոքեան ներկայացուցչութեան ղեկավար, քաղաքագէտ Անդրանիկ Միհրանեանը, Խ. Աբովեանի անուան պետական մանկավարժական համալսարանում հանդիպման ընթացքում խօսելով Հայոց ցեղասպանութեան հարիւրամեայ տարելիցի միջոցառումների մասին, ասաց, թէ այդ միջոցառումը շրջադարձային է եղել:

«Գուցէ անհամեստ հնչի, բայց ցեղասպանութեան հարցում հրեաներն իրենց ձեռքում չունեն մոնոպոլիա: Առաջին անգամ համաշխարհային մակարդակով այսպիսի հնչեղութիւն եղաւ. հենց այդ օրերին միջազգային համայնքը գնահատականներ տուեց, գնահատական Հռոմի Պապի կողմից, Գերմանիայի Նախագահի կողմից: Ոչ մի անգամ էլ չէր եղել, որ Ապրիլի 24-ին երկու հօր պետութիւնների ղեկավարներ այցելէին Հայաստան: Սա իր եւ՝ հնչեղութեամբ, եւ՝ մասշտաբով նախադէպը չունէր», - ասաց Անդրանիկ Միհրանեանը:

Նրա խօսքով, ցաւոք, ոչ բոլոր հայ համայնքներն են կարողացել լինել այն բարձր մակարդակի վրայ, որպէսզի իրենց պետութիւնները շատ ակտիւ մասնակցութիւն ունենային:

«Շատ ախոս, որ ԱՄՆ-ի Նախագահի քաջութիւնը եւ իմաստունութիւնը այնքան չհերիքեց, որ ոչ միայն նա չեկաւ, այլ չեկաւ նաեւ փոխնախագահը», - նշեց Անդրանիկ Միհրանեանը՝ յաւելելով, որ եթէ նրանց ցաւը Թուրքիային չհնղացնէլ է եղել, ապա այդ իմաստով, ըստ Անդրանիկ Միհրանեանի, Ռուսաստանի Նախագահը շատ աւելի մեծ խնդիրներ ունէր:

Քաղաքագէտի խօսքով, Ռու-



Քաղաքագէտ Անդրանիկ Միհրանեան

սաստանը եւ Թուրքիան շատ լաւ յարաբերութիւնների մէջ են, բայց վարչապետ Պուտինի իմաստութիւնն աւելի մեծ է եղել եւ նա որոշել է հայ ժողովրդի ողբերգութիւնը կիսել ուսանելի հետ:

Անդրանիկ Միհրանեանը չի շեղ, թէ երբ ինքը ասպիրանտ էր, հարիւրաւոր գրքեր էին տպագրուում մոռացուած ցեղասպանութեան մասին, իսկ այժմ, նրա խօսքով՝ համաշխարհային հանրութեան մէջ Հայոց ցեղասպանութեան հարցը բեկումնային է:

Ըստ նրա՝ ամենաշրջադարձայինը, որ այս ժամանակահատուածում տեղի է ունեցել, դա այն է, ինչ կատարուել է Թուրքիայում:

«Թուրքական հասարակութեան մէջ հազուադէպ մարդիկ էին տեղեակ, թէ ինչ է կատարուել այդ ողբերգութեան ժամանակ, եւ երկրորդ՝ քրէական հետապնդումներ էին իրականացուում բոլոր նրանց նկատմամբ, ովքեր յանկարծ կ'օգտագործէին «ցեղասպանութիւն» բառը: Իսկ այժմ, փաստօրէն, Թուրքիայի 20%-ը պատրաստ է ճանաչել ցեղասպանութիւնը», - ասաց Անդրանիկ Միհրանեանը:

Կրճատուել են խոշոր Հարկատուների Փոխանցումները Պետպիւտճէ

Ֆինանսների նախարարութեան հրապարակած տուեալների համաձայն, այս տարուայ առաջին երեք ամիսներին Հայաստանի առաջին հազար խոշոր հարկ վճարողները պետպիւտճէ են փոխանցել 152.3 միլիարդ դրամ, ինչը 1.3 տոկոսով պակաս է 2014 թուականի նոյն ժամանակահատուածում վճարուած հարկերից ու տուրքերից:

Անցած տարուայ վերջին երկու ամիսներին հայկական դրամը տոլարի նկատմամբ արժեզրկուեց շուրջ 16.5 տոկոսով, եւ եթէ ցուցանիշները դիտարկուում ենք տոլարով, տեսնում ենք, որ անկումը տասն անգամ մեծ է: Այս տարուայ Յունուար-Մարտ ամիսներին հայաստանեան խոշորագոյն ընկերութիւնները պետպիւտճէ են փոխանցել մօտ 323 միլիոն դոլար, ինչը աւելի քան 13 տոկոսով պակաս է 2014-ի նոյն ժամանակահատուածում կատարուած վճարումներից:

«Հայկական ժամանակ» պարբերականի տնտեսական մեկնաբան Հայկ Գեորգեանի խօսքով, Հայաստանի տնտեսութեան գրեթէ երեք քառորդը ներկայացնող հազար խոշոր ընկերութիւնների վճարած հարկերի նման կտրուկ անկումը պարզորոշ վկայում է, որ երկրում տնտեսական ճգնաժամ է. - «Նաեւ պիտի արձանագրենք, որ պիւտճէ

թերակատարում է, թերակատարում է շատ մեծ ծաւալներով. իմ հաշուարկներով, [այս տարուայ առաջին երեք ամիսներին] մօտ 80-85 միլիոն դոլար քիչ գումար է հաւաքուել, քան նախատեսուած էր պետական պիւտճէ»:

Արժոյթի միջազգային հիմնադրամի՝ անցած ամիս հրապարակած World Economic Outlook-2015 զեկոյցի համաձայն, Հարաւային Կովկասում Հայաստանը միակ երկիրն է, որը 2015 թուականը կը փակի տնտեսութեան անկումով. տնտեսութիւնը կը կրճատուի 1 տոկոսով: Դեռ աւելին՝ յաջորդ տարի եւս տնտեսութիւնը չի աճի՝ կը գրանցուի 0 տոկոս աճ:

Հայաստանի իշխանութիւնները, կարծես թէ, այլ կարծիքի են. մօտ երկու շաբաթ առաջ Մաղկաձորում երիտասարդ հանրապետականների առջեւ վարչապետ Յովիկ Աբրահամեանը խոստացաւ այս տարին փակել տնտեսական աճով: Ընթացիկ տարուայ պետպիւտճէ կառավարութիւնը ծրագրել է ապահովել 4.1 տոկոս աճ, եւ այս ցուցանիշը մինչեւ օրս չի վերանայուել:

Մինչդեռ, Հայկ Գեորգեանի խօսքով, տնտեսութեան անկումը եւ որպէս հետեւանք՝ հարկերի կրճատումը դժուար թէ կարճաժամկէտ լինեն: -

ԼՈՒՐԵՐ

Freedom House. «Հայաստանի Լրատուամիջոցները Դեռ Անագատ ԵՏՆ»

Հեղինակաւոր Freedom House իրաւապաշտպան կազմակերպութիւնը հրապարակել է աշխարհի երկրների՝ լրատուամիջոցների ազատութեան վարկանիշը: Փաստաթղթի համաձայն՝ Հայաստանը 135-րդ տեղում է գտնուում՝ հենց մասամբ ազատ եւ անազատ մամուլի սահմանագծում:



Ըստ Freedom House-ի հրապարակած զեկուցի, Հայաստանի լրատուամիջոցներն աւելի ազատ են, քան Թուրքիայի կամ Մեքսիկայի, եւ անհամեմատ աւելի ազատ են, քան Ադրբեջանի կամ Ռուսաստանի լրատուամիջոցները:

Աշխարհում ամենաազատ լրատուամիջոցները Նորվեգիայում ու Շվեդիայում են, իսկ ամենանազատ վիճակում են գտնուում Ուզբեկստանի ու Հիւսիսային գորիայի լրատուամիջոցները:

Freedom House-ի ներկայացուցիչ էլէն Աղեկեանի խօսքով, Հայաստանը մասամբ ազատ ու անազատ մամուլի սահմանագծում է հիմնականում աւանդական խնդիրների պատճառով, այդ թւում՝ հասարակական անձանց կողմից թշնամանքը լրագրողների նկատմամբ եւ անկախ ձայների չափազանց սահմանափակ թիւը տպագիր, ռատիո- եւ հեռուստատեսային լրատուամիջոցներում:

Միեւնոյն ժամանակ, ըստ Աղեկեանի, տեխնոլոգիաների զարգացումը դրական է ազդել Հայաստանում լրատուամիջոցների ազատութեան վրայ: «Հայաստանում կարեւոր եւ դրական փոփոխու-

թիւններ են նկատուել՝ յայտնուել են բազմաթիւ ազատ ինտերնետային լրատուամիջոցներ, որտեղ տեղափոխուել են աւանդական լրատուամիջոցներից ազատուած լրագրողներ», - ասաց Freedom House-ի ներկայացուցիչը:

Անդրադառնալով Ադրբեջանին՝ Աղեկեանը նշեց, որ այնտեղ իրավիճակի կայուն վատթարացում է նկատուում. - «Տարածաշրջանում ամենալուրջ խնդիրներն առկա են Ադրբեջանում, որտեղ փակուել են լրատուամիջոցներ, սահմանափակուել է ազատ արտայայտուելու իրաւունքը, ձերբակալուել են լրագրողներ, փակուել է նաեւ «Ազատ Եւրոպա/Ազատութիւն» ռատիոկայանի ադրբեջանական ծառայութիւնը»:

Ինչ վերաբերում է Հայաստանին, ապա, ըստ փորձագէտի, այն կարող է երկրներանքի առջեւ յայտնուել: «Եւրասիական Միութեան անդամ դառնալուց յետոյ Հայաստանն իր վրայ Ռուսաստանի ու ժողովրդի ազդեցութիւնն է զգում, եւ դեռ պարզ է, թէ Հայաստանում իրադարձութիւնները ո՞ր ուղղութեամբ կը զարգանան», - ասաց Աղեկեանը:

Լեռնային Ղարաբաղի Նոր Խորհրդարանում Ներկայացուած Կը Լինի Հինգ Ուժ

Լեռնային Ղարաբաղի նորընտիր Ազգային ժողովում ներկայացուած կը լինի հինգ քաղաքական ուժ, որոնք կիրակի օրը անցկացուած ընտրութիւններում յաղթահարել են նուազագոյն՝ 5 տոկոսի շեմը:

Համամասնական ընտրութիւնների նախնական արդիւնքներով, որոնք հրապարակուեցին Լեռնային Ղարաբաղի կենտրոնական ընտրական յանձնաժողովի նախագահ Սրբուհի Արզումանեանի կողմէ, «Ազատ Հայրենիք» կուսակցութիւնը ստացել է քուէների 47.35, Արցախի ժողովրդավարական կուսակցութիւնը՝ 19.01, ՀՅ Դաշնակ-

ցութիւն կուսակցութիւնը՝ 18.81, «Շարժում 88» կուսակցութիւնը՝ 6.93 եւ «Ազգային վերածնունդ» կուսակցութիւնը՝ 5.38 տոկոսը:

Յիշեցնենք՝ «Ազատ Հայրենիք» կուսակցութեան առաջնորդը Լեռնային Ղարաբաղի վարչապետ Արայիկ Յարութեանն է, Արցախի ժողովրդավարական կուսակցութեան ղեկավարը՝ գործող Ազգային ժողովի խօսնակ Աշոտ Ղուլեանը:


Ընտրութիւններին մասնակցող միւս երկու կուսակցութիւնները՝ Լեռնային Ղարաբաղի կոմկուսը եւ «Խաղաղութիւն եւ զարգացում»-ը նուազագոյն շեմը չեն յաղթահարել:

Թուրքիայում ԱՄՆ Դեսպանը Շեշտել է, Որ Պէտք է Բաց Խօսել, Թէ Ինչ է Եղել 1915-ին

Թուրքիայում ԱՄՆ դեսպան Ջոն Պասը յայտարարել է, թէ 1915-ին մասին բաց խօսելը կ'օգնի կարգաւորել հայ-թուրքական յարաբերութիւնները:

Թուրքական Hurriyet-ի փոխանցմամբ՝ Անգարայում ԱՄՆ դեսպան Ջոն Պասը մամուլի օրուայ առթիւ լրագրողների հետ հանդիպման ժամանակ խօսել է նաեւ 1915-ից եւ հայ-թուրքական յարաբերութիւններից:

«Թուրքիան եւ Հայաստանը կենտրոնացել են մէկ օրուայ վրայ: Սակայն կարեւորը հարցի լուծումն է: Կարեւոր է կենտրոնանալ, թէ տարուայ միւս օրերին մենք ինչ պէտք է անենք: Պէտք է բաց խօսել, թէ ինչ է տեղի ունեցել 1915-ին:



Թուրքիայ մօտ ԱՄՆ դեսպան Ջոն Պաս

Դա կ'օգնի հայ-թուրքական յարաբերութիւնների կարգաւորմանը», - ասել է Ջոն Բասը:

Թուրքիան, Ադրբեջանն Ու Վրաստանը Համագործակցելու Են Ռազմական Ոլորտում

Թուրքիան, Ադրբեջանն ու Վրաստանը պայմանաւորուել են համագործակցել ռազմական ոլորտում:

Ինչպէս հաղորդում է APA-ն, վկայակոչելով Ադրբեջանի ՊՆ-ն, Պնախարար Ջաբիր Հասանովի՝ Թուրքիայի եւ Վրաստանի գլխաւոր շտաբերի պետերի հետ հանդիպմանը որոշում է կայացուել Համակարգող խորհուրդ ստեղծել՝ երեք երկրների

միջեւ համագործակցութիւնը կարգաւորելու համար:

Կառուցի նպատակն է կազմակերպել համատեղ զօրավարական քննարկումներ, կուրսեր եւ թրեյնինկներ, նաեւ համակարգել գործողութիւնները կրթութեան եւ բժշկութեան ոլորտներում, փորձի փոխանակման եւ այլ հարցերում:

Հանդիպման արդիւնքում յուշագիր է ստորագրուել:

Միացեալ Նահանգները Պէտք Զէ Ռազմական Օգնութիւն Տրամադրէ Ատրայէժանին

Շարունակուած էջ 1-էն

նպաստել Լեռնային Ղարաբաղի հակամարտութեան կարգաւորման:

«Կրակի դադարեցման համաձայնութեան առկայութեան պայմաններում մէջ նոյնիսկ, ատրպէյճանական ուժերը յաճախ կ'անցնին բաժանարար գիծը եւ բախումներ կը հրահրեն: Մենք կը փափաքինք նպաստել կողմերու միջեւ փոխադարձ վստահութեան հաստատման ու մեծացման եւ ճակատային գծի վրայ լարուածութեան թուլացման, որպէսզի վստահութիւն ունենանք, որ նման գործելակերպը այլեւս չի շարունակուիր», - ըսած է ան, աւելցնելով. - «Միայն այդ պայ-

մաններուն տակ, մենք կարգաւորման հեռանկար կը տեսնենք, կարելի է՝ Միակի խումբի միջոցով, երբ Ղարաբաղը մնայ անկախ կամ Հայաստանի մաս դառնայ»:

Գոնկրէսականը յայտնեց, որ Յանձնախումբը ջանքեր կը գործադրէ ԱՄՆ-ի կողմէ Լեռնային Ղարաբաղի անկախութեան ճանաչման համար: Այդ նպատակով, Յանձնախումբը Ղարաբաղի անկախութեան օրը սովորաբար միջոցառում կը նախաձեռնէ:

Յանձնախումբը նաեւ կը նպաստէ ԱՄՆ-ի ու Հայաստանի միջեւ ապրանքներուն շրջանառութեան զարգացման, ընդլայնման եւ տնտեսական կապերու խորացման:

Ձեր Ծանուցումները Վստահեցէ՛ք «Մասիս» Շաբաթաթերթին

T: (626) 797-7680 F: (626) 797-6863 Email: massis2@earthlink.net

Ատրայէժանում Յայտնուած Հայր Դատապարտուեց 15 Տարուայ Բանտարկութեան

Գեանջայի ծանր յանցագործութիւնների գործերով դատարանը, զերութեան մէջ յայտնուած Արսէն Բաղդասարեանին դատապարտեց 15 տարուայ ազատազրկման: Անցած դատական նիստին դատախազը պահանջել էր Բաղդասարեանին դատապարտել 18 տարուայ ազատազրկման:

Բաղդասարեանը պատիժը կը կրի իսիստ ռեժիմի քրեակատարողական հիմնարկում, իսկ պատժի կրումը կը հաշուարկուի ձերբակալման օրուանից՝ 2014 թուականի Դեկտեմբերի 26-ից:

Այս մասին տեղեկացնում է Ադրբեջանական APA լրատուական գործակալութիւնը:

Ադրբեջանական իրաւապահները Արսէն Բաղդասարեանին մե-

ղադրանք են առջադրել յանցաւոր կազմակերպութեանը անդամակցութեան, սպանութեան փորձի, պաշտիւնի կամ հրդեհի իրականացման մէջ՝ ուղղուած Ադրբեջանի պաշտպանութեան կամ տնտեսական անվտանգութեան դէմ:

Լեռնային Ղարաբաղի պաշտպանութեան նախարարութիւնը հերքում է պնդումներն այն մասին, որ Բաղդասարեանը Արցախի ՊԲ զինծառայող է: Պաշտպանութեան բանակը հաղորդագրութեամբ յայտնել է, որ պայմանագրային զինծառայող՝ Բաղդասարեանը պարբերաբար ինքնակամ լքել է մշտական տեղակայման վայրը, ինչի համար ժամանակաւորապէս հեռացուած է եղել ծառայութիւնից:

Թուրքիայում Հայկական Եկեղեցին Հիւրանոց Դարձնելու Թոյլտուութիւն Են Տուել

Թուրքիայում մշակութային ժառանգութեան ցուցակում գտնուող էլազըղի (Խարբերդ) հայկական բողոքական եկեղեցին հիւրանոց դարձնելու թոյլտուութիւն են տուել:

Թուրքական T24.com կայքում հրապարակուած տեղեկութեան համաձայն՝ թէեւ էլազըղի հայկական բողոքական եկեղեցին գրանցուած է Թուրքիայի մշակութային ժառանգութեան ցանկում, դա չի խանգարել եկեղեցու տարածքում հիւրանոց կառուցելու կամ այն հիւ-

րանոց դարձնելու թոյլտուութիւն տրամադրել:

Նշուում է, որ եկեղեցու տարածքը որպէս ավտոկայանատեղի օգտագործող անձը դիմել է համապատասխան կառուցներին եւ հիւրանոց կառուցելու թոյլտուութիւնը ստացել: Նա եկեղեցին հիւրանոցի վերածելու համար դիմում ներկայացնելու ժամանակ պնդել է, թէ այդքան մեծ կառուցը, որը երկու յարկից է բաղկացած, չէր կարող եկեղեցի եղած լինել:

ՎԵՐՋԻՆ ՃԻԳ ՔԱՄՓ ԱՐՄԵՆԸ ՓՐԿԵԼՈՒ ՅԱՍԱՐ



ՈՒՅԿԱՐ ԿԻՒԼԹԵՔԻՆ
«Ակօս»

Հանրապետության շրջանին, յատկապես 1974 թվականին ետք պետական եւ դատական դաւադրութիւնով գրաւուած փոքրամասնութեանց ազգապատկան կալուածներու մէջ յատուկ նշանակութիւն ունին երկու օրինակներ: Առաջինը Թուզլայի Մանկական ճամբարը՝ Քամփ Արմենն է: Երկրորդ օրինակը վենետիկեան Միլիթարեան ուխտի Պոմոնթիի վարժարանը: Եթէ մնացեալ կալուածները բարերարներու կտակներ էին, այս երկուքը տուեալ հաստատութիւններու կողմէ բոլոր թղթաբանութիւնները կատարուելով գնուած տարածքներ: Այս երկու օրինակները ունին ուրիշ

հասարակական կէտ մը: Երկուքն ալ կրթական հաստատութիւններ են:

Նախորդ շաբաթավերջին այս երկու հաստատութիւններու երդիկին ներքեւ ուրախ եւ տխուր ապրումներ տեղի ունեցան: Ուրախն այն էր որ Պոմոնթիի Միլիթարեան վարժարանը մօտ քառասուն տարուայ ընդհատումէն ետք իր շէնքին մէջ կ'ունենար մատուցմը: Թէեւ շատ նեղ, հագիւ չորս քարակուսի մեթր տարածքով այս աղօթատեղին խորհրդանշական էր արգելքի մը վերացման փաստը ըլլալով: Յիենք որ մօտ անցեալին օրինական կարգադրութիւնով կարելի եղաւ պետական դպրոցներուն մէջ մէսճիտի մը գոյութիւնը: Այդ նոյն կարգադրութենէն օգտուելով Միլիթար-



եանն ալ դիմում կատարեց իսթանպուլի կրթական Տնօրէնութեան եւ իրականացուց մատուցի բացումը: Շաբաթ օր կայացած բացման հանդիսութեան հիւրընկալն էր Գերապայծառ Լեւոն Արք. Զէքիեան: Կառավարութիւնը ներկայացնելով Եւրոմիութեան Նախարար Վոլֆան Պոզքըր պատուեց մատուցի բացումը: Ներկայ էին նաեւ Շիշլիի գաւառապետը եւ դպրոցի իրաւական նիւթերու խորհրդատուներ Քէզպան եւ Հիւսէյին Հաթէմի ամօրը:

Որքան ալ ուրախաւիթ գտնուի մատուցի բացումը, դպրոցի հիմնական խնդիրը, կալուածաթուղթի իրաւունքը դեռ չէ լուծուած:

Այս ալ տխուր երեսակը Կէտիկիաշայի Հայ Բողոքականաց Եկեղեցւոյ պատկանող Քամփ Արմենը եթէ շտապ գարգացում մը չի կայանայ, այս ամսու վերջ պիտի փլի եւ ամբողջովին պիտի անհետանայ: Այս իրողութեան դէմ ճամբարի նախկին սաները վերջին

ճիգ մը վատնելով մէկտեղուեցան իրենց ձեռքերով կառուցած եւ այժմ լքուածութեան մէջ աւերուած շէնքին շուրջ: Գործունէութեան շրջանին Հրանդ Տինք, Ռաքէլ Տինք, էրոլ Տորայի կարգին աւելի քան 1,500 պատանիներու ուսում ջամբող հաստատութիւնը վերջին անգամ յուսադրուած էր, երբ 2011 թուին Վաքըֆներու օրէնքին մէջ բարեփոխումներ կատարուեցան եւ փոքրամասնութեանց գրաւեալ կալուածներու վերադարձուիլը օրակարգի եկաւ: Կետիկիաշայի Բողոքականաց եկեղեցին իսկոյն դիմում կատարեց Վաքըֆներու Ընդհանուր Տնօրէնութեան: Սակայն այս վերջինը մերժեց որեւէ միջոց, պատճառաբանելով որ տարածքը անցնող ժամանակահատուածի ընթացքին բազում անգամներ ձեռք փոխած է:

Այժմ խումբ մը կամաւոր իրաւապաշտպաններ կը պատրաստուին վերատին իրաւական պայքար տանելու եւ առաջին հերթին ալ փլուզումը կանխելու համար:

Աննախընթաց Արուեստի Երեկոյ



Կազմակերպութեամբ՝

Նոր Սերունդ Մշակութային Միութեան Պարախումբի Վարչութեան



(Երգ, պար, ասմունք, գաւեշտ)
Տեղի կ'ունենայ՝
Շաբաթ, 9 Մայիս 2015, Երեկոյան ժամը 7-ին
First Church of the Nazarene
3700 E Sierra Madre Blvd, Pasadena, CA





ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 100-ԱՄԵԱԿԻՆ ՆՈՒԻՐՈՒԱԾ ԼԻԲԱՆԱՆԱՅԱՅ ՄԱՍՈՒԼԻ ՄԻԱՑԵԱԼ ԹԻՒԸ

Խ. Ծ. Իրենց շահեկանուրբան համար լոյս կ'ընծայենք Լիբանանի Հայոց Յեղասպանության 100-ամեակի ոգեկոչման նուիրում՝ հայ երեք ֆաղափական կուսակցություններու պաշտօնաթերթեր՝ Ազգային, Արարատի եւ Զարթոնքի միացեալ բացառիկէն Յ. Բագրատունիի, (Հ.Յ.Դ.) Ա. Գալփաբեանի (Ա.Դ.Հ.Կ.) եւ Յ. Գասարեանի առաջնորդող խօսքերը:

25 ԱՊՐԻԼ 2015-ԻՆ՝ ՊԱՅՔԱՐԻ ՆՈՐ ԴԱՇՏ

ՅԱԿՈՒԲԱԳՐԱՏՈՒՆԻ

Հայոց ցեղասպանութեան հարիւրամեակը այսօր փաստօրէն կը թեւակոխէ Հայ դատի հետապնդման եւ Համահայկական հռչակագիրով նշուած հայ ժողովուրդի իրաւունքներու ձեռքբերման համար հետզհետէ սաստկացող պայքարի նոր հանգրուան մը:

Հանգրուան մը, որ վստահաբար նոյնքան ծանր, դժուարութիւններով լեցուն, անակնկալներով լրի եւ ոչ նուազ վտանգալոր պիտի ըլլայ, քան անցնող հարիւր տարիներն ու Հայ դատի հետապնդման հոլովոյթը, հայապահպանումէն քաղաքականացում ու յեղափոխականացում, մինչեւ Հայաստանի անկախացում ու Արցախի ազատագրում եւ անկախ պետութեան հռչակում:

Այո՛, հարիւրամեակը ոգեկոչումն է թուրքիոյ կողմէ գործադրուած Յեղասպանութեան նահատակներուն յիշատակին, բայց նոյնքան նաեւ՝ սոնակատարութիւնն է հայ ժողովուրդի գոյատեւման յաղթանակին՝ Հայաստանէն մինչեւ սփիւռքի տարածքին ամէնէն փոքր գաղութ:

Բայց մանաւանդ հարիւրամեակը նոր մարտահրաւէրներու դիմա-կալման մեկնակէտն է ու հրաւէր՝ աշխարհի իւրաքանչիւր հայու մշտնորոգ ուժականութեամբ եւ խորանարդեալ վճռակամութեամբ բռնցքուելու եւ պայքարի նոր հանգրուան նետուելու համար:

Պետութիւններու կողմէ Յեղասպանութեան ճանաչման գործընթացը պիտի շարունակուի անկասկած: Օրէնսդիր թէ գործադիր իշխանութիւններուն կողմէ ճանաչման որոշումները կամ շրջանային թէ միջազգային կազմակերպութիւններու կողմէ այս ուղղութեամբ կատարուած յայտարարութիւնները կարեւոր են ու պիտի շարունակեն իրենց կարեւորութիւնը պահել: Այսուհանդերձ, անոնք պարզապէս ընդհանրական պայքարի մէկ հանգրուանն են, կարեւոր հանգրուան, բայց ոչ բաւարար: Յեղասպանութիւնը ճանչցող պետութիւնները, կազմակերպութիւնները

Շար.ք էջ 18

100-ԱՄԵԱԿԻ ՄԵՐ ԿԱՐԵՒՈՐԱԳՈՅՆ ՈԱԶՄԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ՝ ՄԻԱՍՆԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ՅԱԿՈՒԲ ԳԱՍԱՐՁԵԱՆ

Հայոց ցեղասպանութեան 100-ամեակի սեմին, պատահական չէր վատիկանէն լսել հայոց ի նպաստ մեծ յայտարարութիւնը՝ 20-րդ դարասկիզբին թուրք պետութեան հայոց դէմ գործադրուած ոճիրին արդարացի սահմանումը, որպէս Յեղասպանութիւն: Պատահական անձ մը չէր գայն սահմանողը: Ան Ֆրանչիսկոս մեծ մարդասէր պապն էր՝ Աստուծոյ մարդը, որ իր խիղճին, Աստուծոյ եւ պատմութեան առաջ կատարեց իր աստուածահաճոյ պարտքը՝ հայ ժողովուրդին եւ համայն մարդկութեան հանդէպ ըլլալով արդար եւ անաչառ, հեռու քաղաքական նեղմիտ հաշիւներէ եւ նկատառումներէ:

20-րդ դարը, որ պատմական փաստը կը հաստատէ, թէ դարն էր գիտական եւ մշակութային իրագործումներու վերելքի, դժբախտաբար նաեւ դարը հանդիսացաւ փաստելու մարդուն վայրագութիւնը, որ լաւագոյնս արտացոլաց երկու աշխարհամարտերով, ցեղասպանութիւններով եւ մարդկութեան դէմ գործուած ոճիրներով:

Հայոց ցեղասպանութիւնը առաջինն էր այս բոլորին, զոր թուրք պետութիւնը գործադրեց Չարդելով իր իսկ հոգատարութեան տակ գտնուող խաղաղ քաղաքացիները՝ իր պատմական հողին վրայէն բնաջնջել փորձելով ամբողջ ժողովուրդ մը: Միջազգային ընտանիքին կողմէ օրին չառնուած քայլերը պատժելու ոճրագործը, ճամբան հարթեց ֆաշիական եւ նացիական գաղափարախօսութիւններու, արիւնարբու բռնատիրութիւններու եւ այլ ցեղասպանութիւններու, Հրէական ողջակիզումէն մինչեւ՝ Քամպուտիա, Ռուանտայէն մինչեւ Տարֆուր-Տահէ եւ Նուսրա:

Մարդկային իրաւունքներու հասկացողութիւնը գոյութիւն ունէր մարդկային խիղճը խոցող այս բոլոր բարբարոսութիւններէն ալ առաջ: 14-րդ եւ 15-րդ դարերուն եւրոպական աւատապետութիւնը տեղի տուաւ ժողովրդավարական եւ ազատական սկզբունքներու դիմաց ու աստիճանաբար չքացաւ: 1789-ին Ֆրանսական յեղափոխութեան նախաշեմին ֆրանսացի Մարքիզ Լա Ֆայետ սահմանադրութիւն դնելու առաջարկ բերաւ՝ թագաւորներու անսահման եւ անհաշուետու իշխանութիւնը զսպելու համար:

Դժբախտաբար վերոյիշեալները չկրցան կանխարգիլել իշխանութիւններու կողմէ հետագային գործադրուած ոճիրները, որոնցմէ մեծագոյններէն էր Հայոց ցեղասպանութիւնը:

Շար.ք էջ 19

ՊԱՏՄԱԿԱՆ ԱՐԴԱՐՈՒԹԻՒՆԸ ՎԵՐԱԿԱՆԳԵԼՈՒ ՉՐԱՄԱՅԱԿԱՆԸ

ՄԵՊՈՒՀ ԳԱԼՓԱՔԵԱՆ

23 Ապրիլ 2015-ին, Երեւանի ժամով երեկոյեան ժամը 19:15-ին, որ եղերական թուականը կը խորհրդանշէ, աշխարհասփիւռ հայկական բազմահարիւր եկեղեցիներու անլուրի գանգալատուները միաժամանակ դէպի երկինք ու աշխարհ պիտի հնչեցնեն իրենց խորհրդանշական 100 դողանջները՝ վերակոչելով Մեծ եղեռնի անմեղ զոհերու յիշատակը եւ ազդարարելով սկիզբը Հայոց ցեղասպանութեան հարիւրամեակին ձօնուած պետական ձեռնարկներուն, որոնց ներկայ պիտի գտնուին աշխարհի բազմաթիւ պետութիւններու ղեկավարներ ու բարձրաստիճան պաշտօնատարներ:

Իսկութեան մէջ, մարդկութեան՝ մասնաւորաբար հայ ժողովուրդին դէմ գործադրուած այդ սոսկալի ոճիրի դատապարտման եւ հայոց մէկ ու կէս միլիոն անմեղ զոհերու յիշատակի ձեռնարկներուն սկիզբը շատոնց տրուած է:

Բազմաթիւ ու բազմաբնոյթ էին սփիւռքի եւ մայր հայրենիքի մէջ իրականացուող ձեռնարկները՝ դիտական քննարկումներ, դասախօսութիւններ, արխիւային հազուագիւտ փաստաթուղթերու եւ հարիւրաւոր տեսանկյուններու ցուցադրութիւն, մշակութային ձեռնարկներ ու երթեր:

Այո՛, բազմաթիւ են այդ ձեռնարկները, բայց բոլորին ընդհանուր նպատակն ու ուղղութիւնը մէկ է՝ դատապարտել մարդկութեան դէմ կատարուած ամենասոսկալի ոճիրը եւ ցոյց տալ, թէ ինչպիսի մոլեգին բարբարոսութիւն կը դիմագրաւէր հայ ժողովուրդը, անշուշտ միաժամանակ ներկայացնելով նաեւ անոր հրաշափառ վերածնունդը:

Վերածնունդ՝ որ շատերուն անվերապահ հիացմունքին արժանացած է, իսկ ոմանց ալ սեւ ու չար նախանձի առիթ պատճառած է:

Հայաստանի անկախացումէն եւ Արցախ աշխարհի ազատագրումէն ետք որակական նոր՝ շատ աւելի բարձր աստիճանի հասած է Հայաստան-Արցախ-Սփիւռք համագործակցութիւնը, ու թէեւ այս բնագաւառին մէջ ընելիքներ դեռ շատ կան, սակայն անհերքելի ճշմարտութիւն մը կայ. այս սերտ համագործակցութեան իբրեւ արդիւնք, որակական նոր աստիճանի բարձրացաւ նաեւ Հայ դատի հետապնդումն ու պահանջատիրութիւնը: Եւ ասիական մեզի համար քաղաքական սոսկական հոլովոյթ է, որուն վերջնական յաղթանակին կը հաւատանք բոլորս եւ որուն իրագործումին կը ձգտին եռամիութեան մեր բոլոր ջանքերը:

Նախ եւ առաջ, այս հոլովոյթը յարգանքի այն տուրքն է, որ մենք, մեր լուռ ու արժանապատիւ խոնարհումէն ետք, կրնանք եւ պարտաւոր ենք բերել Հայոց ցեղասպանութեան մէկ միլիոն ու կէս անմեղ զոհերու անմեռ յիշատակին:

Մանաւանդ մեծ ջանք չի պահանջուիր հաշուելու համար, թէ անցած հարիւրամեակի ընթացքին այդ թիւը դեռ քանի՞ցս կրնար բազմապատկուել, որ իրականութեան մէջ սոսկական թիւ մը չէ, այլ՝ ողբերգականօրէն աշխարհ չէկած Փարամազներու, Անդրանիկներու, Վարուժաններու, Սիւսաններու եւ Կոմիտասներու հսկայական բանակ մը...:

Հայոց ցեղասպանութեան 100-ամեակը շրջադարձային պիտի դառնայ նախ եւ առաջ արդար հատուցման մեր համազգային պահանջով: Որքան մերօրեայ թրքական իշխանութիւնները կառչին փակուղի տանող իրենց ստահոտ յոխորտանքներու եւ ուրացման քաղաքական վարքագիծին, ակնյայտ ու կարեւոր երեւոյթ մը կայ. նոյնիսկ այնտեղ՝ թուրքիոյ մէջ տեղի ունեցող խմորումները կը վկայեն այն մասին, որ այսօր որոշակի գանգուած մը կայ, որ այլեւս չ'ուզէր կրել ուրացող ցեղասպանի ժառանգորդը ըլլալու տաժանելի բեռը:

Մերօրեայ քաղաքական համաշխարհային միտքը այլեւս դժուարութեամբ կը հանդուրժէ ուրացումին, սուտին ու կեղծիքին: Ժամանակակից թուրքիոյ մէջ դրական այնպիսի հոլովոյթներ տեղի կ'ունենան, որոնց գոյութիւնն իսկ մէկ կամ երկու տասնամեակ առաջ կարելի չէր պատկերացնել: Ըստւայդին վկայութիւնն են նաեւ էրտողանեան իշխանութեան քաղաքական ապարդիւն ջղագարութիւնները, որոնցմով անոնք պարբերաբար հանդէս կու գան, երբ խօսքը կը վերաբերի Հայոց ցեղասպանութեան...:

Հայկական հարցին շուրջ խօսելու ընթացքին միշտ զգուշաւոր՝ թուրքիոյ նախագահ էրտողանի ջղաձգութիւնները նոյնպէս այս ծիրին մէջ կ'իջնան: «Թուրքիան պատրաստ է գին վճարելու, եթէ պատմաբանները որոշեն, որ եղածը ցեղասպանութիւն է»: Տարիներ առաջ այսպիսի յայտարարութիւն մը ենթադրելն անգամ անհաւանական էր: Ու թէեւ, ինչպէս միշտ, այս անգամ եւս թուրքիոյ նախագահին յայտարարութիւններուն մէջ շատ բարձր տոկոս կը կազմեն քաղաքական աճալարութիւնն ու դիւանագիտական խաղը, միեւնոյնն է, ասիկա կը վկայէ թրքական ներիշխանական ոլորտապտոյտի մը մասին, որ, ի դէպ, նոր սկսած չէ:

Երբ տարի առաջ, երբ Ֆրանսայի ծերակոյտը կը քննարկէր Հայոց ցեղասպանութեան ուրացումը Ֆրանսայի տարածքին քրէականօրէն դատապարտելի արարք նկատելու մասին օրէնքի նախագիծը, թուրքիոյ ազգայնական կուսակցութեան առաջնորդներէն մէկը հանդէս եկաւ յայտարարութեամբ մը, ուր մասնաւորաբար ըսուած էր.

«Ֆրանսացիներուն քայլը, որ ցնցեց մեզ, աննշմար հսկայական

Շար.ք էջ 18

ՀԱՅԵՐԸ ԱՅԺՍ ՊԵՏՔ Է ՀԵՏԱՊՆԴԵՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՊԱՅԱՆՋՆԵՐ՝ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՅԱԲԵԼԵԱԼ ՃԱՆԱԶՄԱՆ ՓՈԽԱՐԵՆ

ՅԱՐՈՒԹ ՄԱՍՈՒՆԵԱՆ

Հայ ժողովուրդը անցեալ շաբաթ անմոռանալի օրեր անցուց Հայոց ցեղասպանութեան հարիւրամեակի ոգեկոչման արարողութիւններուն ընթացքին: «Յունամին», որմէ այդքան կը սարսափէին թուրք ժխտողականները, բազմաթիւ առումներով իրականութիւն դարձաւ... Մինչ աշխարհասփիւռ հայութիւնը վերջին տարիներուն զբաղած էր ոգեկոչման ձեռնարկներու կազմակերպմամբ, անոր ջանքերը կրկնապատկուեցան՝ շնորհիւ որոշ անսպասելի զարգացումներու, որոնց շարքին՝ Թուրքիոյ նախագահ Էրտողանի անմիտ հռետորութիւնն ու հակազդեցութիւնը:

Տարին սկսաւ Էրտողանի մանկամիտ խորամանկութիւններով. Կալիփոլիի պատերազմի հարիւրամեակի յիշատակի օրուան տեղափոխումը Ապրիլ 24-ին նպատակ կը հետապնդէր տապալել Հայոց ցեղասպանութեան 100-ամեակի ոգեկոչման արարողութիւնները: Միջազգային լրատուամիջոցները արագօրէն բացայայտեցին Թուրքիոյ նախագահին հնարքը՝ լայն հրապարակայնութիւն ապահովելով Ցեղասպանութեան յուռձիկայ տարելիցին համար:

Ապրիլի սկիզբը Քարտաշեաններուն այցը Հայաստան հազարաւոր յօդուածներու, պատկերասփիւռի հաղորդումներու եւ ընկերային լրատուամիջոցներու միլիոնաւոր հաղորդագրութիւններու նիւթ դարձաւ: Քանի մը օր անց Հոռոմի Ֆրանսիս պապը իր «ցունամին» յառաջացուց՝ համարձակ խօսքեր ըսելով Հայոց ցեղասպանութեան վերաբերեալ: Անգամ մը եւս Էրտողանը աւելի սրեց իրավիճակը՝ վիրաւորելով ոչ միայն Հոռոմի պապը, այլ նաեւ՝ մէկ միլիառ կաթողիկէները եւ պապի ծննդավայր Արժանթինը: Անկէ կարճ ժամանակ ետք Եւրոխորհրդարանը բանաձեւ ընդունեց Հայոց ցեղասպանութեան վերաբերեալ՝ աւելի լայն լուսաբանում ապահովելով լրատուամիջոցներու մէջ:

Առաջին անգամ Ապրիլ 24-ին եւ այդ ալ հարիւրամեակին աւիթով Հայաստան գտնուելը շատ յուզիչ էր: Հայաստանի կառավարութիւնը վիթխարի աշխատանք տարած էր հրաւիրելով աշխարհի 60 երկիրներէ հազարէ աւելի բարձրաստիճան անձեր, ներառեալ՝ նշանաւոր մտաւորականներ, իրաւա-

զէտներ, քաղաքական գործիչներ, 30 երկիրներու խորհրդարանականներ եւ այլ ցեղասպանութիւններէ վերապրածներ: Ապրիլ 22-23ին ակաւաւոր հիւրերը մասնակցեցան «Ընդդէմ ցեղասպանութեան յանցագործութեան» միջազգային համաժողովին, ուր ես հանդէս եկայ կարճ ելոյթով՝ քննադատելով նախագահ Օպամայի կողմէ Հայոց ցեղասպանութիւն եզրը օգտագործելու խոստման դրժումը: Ես բացատրեցի, որ հակառակ լայնօրէն տարածուած թիւրիմացութեան, Միացեալ Նահանգները բազաթիւ անգամներ ճանչցած են Հայոց ցեղասպանութիւնը:

This year Turkey moved its ceremony for the centennial anniversary of its victory at the Battle of Gallipoli to April 24, to coincide with the Yerevan event. In Gallipoli, Erdogan hosted leaders of the World War I Allies, including 21 heads of state, Australian Prime Minister Tony Abbott, New Zealand Premier John Key, as well as the heir to the British throne Prince Charles and his son Harry.

Diplomatic sources in Moscow told Hürriyet that Putin’s invitation was conveyed to Ankara in March, but Putin’s stance over 1915 prompted Turkey to decline it.

ԻԱՆ ԿՐԱՈՒՄ «ՌԵՔՎԻԵՄ ՆԱՐԱՏԱԿԱՑ ԱԶԳԻՍ ՅԱՅՈՑ»



Photo by Bertj Dajmjan

ԿԱՐԻՆԵՆԵՍԻ ԳԵՈՐԳԵԱՆ

Հայ երաժշտության պատմության մեջ արձանագրուեց մի աննախադէպ երեւոյթ. աշխարհում առաջին անգամ երեւան եկաւ ամբողջովին հայերէն խօսքերով հայկական նորաստեղծ ռեքվիէմ՝ «Ռեքվիէմ նահատակաց ազգիս հայոց», ձօնուած մեր նահատակների հոգիների խաղաղութեան, լայնածաւալ գործ, որ Լարք երաժշտական ընկերակցութիւնը խորին յարգանքով նուիրել է մեր Յեղասպանութեան զոհերի յիշատակին:

Ու գիտէ՞ք, այն գրել է ամերիկացի կոմպոզիտոր Իան Կրաուսը:

Ինչպէ՞ս էր դա պատահել. այդ մասին պատմում է Վաչէ Պարսումեանը:

Իան Կրաուսը մեծ նախապատրաստութիւն էր տեսել այս գործը գրելուց առաջ: Ամէն աւիթով նա պրպտումներ էր անում հայ երաժշտության, հայոց պատմութեան մասին, կարդացել էր հայերի պատմութեան շատ գրքեր, գիտէր ով է այս ժողովուրդը:

Սրանից առաջ երկու անգամ Իանն ու Վաչէն աշխատել էին միասին, հայերէն բանաստեղծութիւնների վրայ գրուած տարբեր երգաշարերի համար. Իանը մօտիկից շփուել էր հայոց լեզուին, նրա ուժական յատկանիշներին, նրա շեշտադրութեանը, ձայնաւորների եւ բաղաձայնների հնչիւնաւորմանը, նախադասութիւնների շարադասութեանը, լեզուի ինքնատիպ արտայայտչաձեւերին եւ այլ շատ մանրամասնութիւններին:

Անցեալ ուսումնական տարում, երբ Պարսումեանը հայ երաժշտութեան պատմութիւն էր դասաւանդում UCLA համալսարանում, նա առանց բացակայութեան, ամէն անգամ ներկայ էր եղել դասերին, ծանօթացել՝ հայկական երաժշտութեանը, հայկական ձայնակարգերի եւ ուրիշների ինքնատիպ ձեւերին:

Իան Կրաուսը կարողացաւ հայկականութիւն դնել այս գործում, ծիսակարգային համարները ներգրաւեց միայն թեթեւ հպումներով, իսկ բանաստեղծական խօսքերին կարողացաւ հայկական շունչ տալ: Իր ամերիկացիութիւնը մնաց վարմունքի, ոճաւորման ժեստի մէջ: Գործի մէջ յարակալ ներկայութիւն էին երկու հսկաների ոգիները. Կոմիտասը՝ իր ամբողջական կերպարով, որին ծանօթանալու օրից պաշտամունքի հասած սիրահարուածութիւն էր ունեցել Կրաուսը, եւ Բախը՝ նրա հոգեւոր երաժշտութեան արուեստի վերապալաց գազաթումով:

Ինչպիսի՞ կառուցուածք ունի մեր ռեքվիէմը:

Այս գործի հենքն են կազմում հայ եկեղեցու հոգեհանգստեան պաշտօնի եօթ երգեր (հանդէս են գալիս զոյգ համարներով), որոնց ընդմի-

ջում են վերջին երկու հարիւրամեակի մեր բանաստեղծների (Սիւսանթո, Ա. Ահարոնեան, Ս. Կապուտիկեան, Պ. Սեւակ, Մ. Պէշիկիթաշլեան՝ Դ. Վարուժան) բանաստեղծութիւնները: Այս ռեքվիէմի շարադրանքը՝ ըստ բովանդակութեան, բաժանուած է երկու մասի. առաջին բաժնում ոգեկոչում է մեր սուրբ (արդէն սրբադասուած) նահատակների յիշատակը, Աստուծոյ ողորմութիւնը հայցելով նրանց հոգիների հանգստի համար. իսկ երկրորդում կայ Աստուծոյ հանդէպ իրենց ուխտը վերանորոգած հայ սրտերի բաղձանք՝ խաղաղութեամբ ապրելու աշխարհում մեր եղբայրների հետ:

«...բողոքիւն շնորհեա՛ն ցնջեցելոց քոց ծառայից, յորժամ գաւ դատել գոր աւարատ ձեռք ստեղծեր»:

«Մէկտեղ յոգնիմք, մէկտեղ ցանքիմք, մէկտեղ թափիմ մեր քրտիմք»:

գիւնն արեւաքարային հալածիմք, որ կեանք առնուիմ հայոց դաշտեր, քնդ աստեղօփ՞նց կայ սիրուիմ քան զանկալի եղբայր անուիմ»:

Այստեղ մէկ անգամ եւս յիշուած է հայ ժողովուրդը, ինչպէս գրուած է Մինդոց գրքում, որպէս Քրիստոսի առաջին վկաներ եւ հաւատացեալներ, որոնք զոհուելով՝ հաւատարիմ են մնացել նրա սուրբ անուանը:

Ռեքվիէմի երկրորդ կէտում դիմում, ինդրանք կայ Աստուծուն, որ մեզ վեր պահի ոխից եւ վրէժխնդրութիւնից, նորոգի հաւատքը ի բարձրեալն Աստուած: Այստեղ հնչում են բարի մաղթանքներ՝ Վարուժանի «Անդաստան»ի խաղաղութեան մաղթանքները, աշխարհի չորս կողմերին, սիրերգութիւնը՝ մարդկութեան հանդէպ:

Նոր է նեքվիէմի հասկացութիւնը որպէս համերգային գործ, այն գալիս է վաղ դարերից եւ հետզհետէ ունեցել է իր անշարժ բաժինները: Սակայն «Լարք»ի ներկայացրած այս ռեքվիէմը ներկայանում է մի շարք նորութիւններով եւ նորարարութիւններով. հայերէն խօսքեր, ամերիկացի կոմպոզիտոր, աշխարհիկ բանաստեղծների գործերով հոգեւոր բանաստեղծութիւններ, մենակատարներ հայ եւ օտար, մանկական երգչախումբ, նուիրում 100ամեայ տարելիցի, ու... մեր գոյութեան վերապրումը կապել մի շատ պարզ առակի՝ կաղամախի ծառի հետ կապուած, որ բնութեան օրէնքներով, վերապրելու ինքնօրինակ յատկանիշ ունի:

Ոչ միայն վերապրում, այլ նաեւ ցնծութիւն էր Ապրիլի 22ին, 2015, UCLA համալսարանի Royce Hall դահլիճի բազմութեան ներ-

Շաբ.ը էջ 17

ԹԵՔԵԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԻՒՆ-ՓԱՍՏԻՆԱ ՎԱՅԱՆ ԹԵՔԵԱՆ ԲԱՆԱՍՏԵՂԾՆ ՈՒ ԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾԻՉԸ

ԱՐԱ ԱՀԱՐՈՆԵԱՆ

Կիրակի, 19 Ապրիլ երեկոցեան, ԹՄՄ Ալթատինայի Պէշիկեթիւրեան Կեդրոնը ժամանդրավայրն էր գրասէր ընտրանիի մը, որ եկեր էր ներկայ գտնուելու Միութեան ֆաստինա-Կլենտէյլ մասնաճիւղի նախաձեռնած ձեռնարկին:

Հայ բանաստեղծութեան իշխան Վահան Թէքէեանի մահուան 70-ամեակին կը զուգարկայէր ձեռնարկը, որուն համար յատկապէս Գարմէլ քաղաքէն հրաւիրուած էր բանաստեղծուհի Թամարա Յովհաննիսեանը՝ ներկայացնելու Վահան Թէքէեան բանաստեղծն ու ազգային գործիչը:

Բացման խօսքով հանդէս եկաւ մասնաճիւղի նախկին ատենապետ ու ներկայի ԹՄՄ Կեդրոնական վարչութեան անդամ՝ Գէորգ Քէօզկերեանը՝ ընթացք տալով օրուան յայտագիրին:

Քէօզկերեան ներկաներուն հետ կարճ խոհեր բաժնելէ ետք, ներկայացուց ՀԲԸՄ Վաչէ եւ Թամար Մանուկեան վարժարանի հինգ աշակերտները ու իրենց հայերէն լեզուի ուսուցիչ՝ Նորայր Տատուրեանը: Ուսանողները յայտագրի ընթացքին յաջողապէս արտասանեցին Վահան Թէքէեանի յայտնի դարձած եւ ծանօթ բանաստեղծութիւններէն: Ուսանողներն էին՝ Սարին Բամբալեան, Արի Էքմէքճեան, Մարլա Քիւրտեան, Նայիրի Համբարեան եւ Աղէկ Աղէկեան:

«Տաղ Հայերէն Լեզուին» եւ «Բաց Ծովուն Մէջ» քերթուածներուն կատարումներէն ետք, բեմ հրաւիրուեցաւ բանաստեղծուհի Թամարա Յովհաննիսեանը, որ

ինամքով պատրաստուած իր զեկոյցը ներակցացնէ:

Յովհաննիսեանի քերթողական վաստակին կուտակումին կողքին, իր մօտ գարգացած է թէքէեանագիտութեան որակաւոր արուեստը, որու ուսումնասիրութեան արժէքաւոր արդիւնքէ Յովհաննիսեանի հրատարկած հատորը մեծ բանաստեղծին վաստակին է նուիրուած: Թամար Յովհաննիսեան անդրադարձաւ մանաւանդ խորհրդային Հայաստանի մէջ Վահան Թէքէեանի գործերուն լոյս ընծայման պարագաներուն, շեշտելով որ հակառակ կատարուած բազմաթիւ հրատարակութիւններուն, Վահան Թէքէեան մարդը, բանաստեղծ ու հասարակական գործիչը բաւարար ու ամբողջական ուսումնասիրութեան չեն ենթարկուած տակաւին: Կարեւոր յիշեցում մըն էր դասախօսին կողմէ՝ Թէքէեան Նամականիին հրատարակութիւնը՝ Դոկտ. Աւետիս Սանճեանի հեղինակութեամբ եւ հրատարակութեամբ՝ ԹՄՄ Կեդրոնական վարչութեան կողմէ 1978էն ետք:

Դասախօսը Թէքէեանը ներկայացուց որպէս հրապարակագիր, խմբագիր ու դաստիարակ, բայց մանաւանդ՝ կարեւորելով իր բեւրած նպաստը արեւմտահայ գաղութներէն ներս արագ զարգացող գրական շարժումներուն եւ իր պատկանած՝ Ռամկավար Ազատական կուսակցութեան ներքին կազմաւորումին ու տարածումին:

Հուսկ, ողջոյնի խօսքով հանդէս եկաւ Փաստինայի Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցուց վաստակաւոր հովիւ Տ. Սարգիս Ա.

Շաբ.ը էջ 17

Buon appetito!

Homenmen Ladies presents

Italian Night

Saturday, May 16, 2015

Starting at 7:30 p.m.
1400 Coronet Ave.
Pasadena, CA 91107

RESERVATIONS
\$30 PER PERSON
Dzovig (626) 429-8366
Karine (818) 324-0574

«ԱՆԱՊԱՏԻ ԽՈՐԱՆԸ...»

ԴՈՎՏ. ՀՐԱՅՐ ՃԷՊԷՃԵԱՆ

«Կրնամ' աչխ գոց վերարտադրել մ'էն մի արիաւ իրի»:

Յեղասպանութեան արհաւիրքի մասին է ակնարկութիւնը...: Հոն՝ պատմութեան այդ դաժան մէկ ժամանակահատուածին, երբ հայը ջարդուեցաւ ու տակաւին տեղահան եղաւ իր արմատներէն...: Հայը կորսնցուց անհամար մարդկային հոգի՝ հող, կալուած եւ հայրենի տուն...: Բայց նաեւ կորսնցուց մտաւորական ու մշակութի եւ գեղարուեստական մտքի «հսկաներ»...: Անոնք որ տակաւին երկար պիտի կարենային ստեղծագործել եւ շատ աւելիով հարստացնել հայկական «Աւանդը»՝ եթէ...:

Եւ յեղասպանութեան այս արհաւիրքին մէջ, Տէր Զօրը՝ «...Հրաբորբօք, կիզիչ ու խանձող արեւին տակ, անասնման տարածութեամբ փշրուած անապատը» եղաւ մէկ կողմէ գերեզման, բայց նաեւ վերապրում...: Տեղահանուած հայուն տոկուն հաւատքը, որ չմահացաւ, երբ նոյնիսկ անտր(հայուն) ֆիզիքականը ոչնչացաւ: Իսկ ան(անոնք) որոնք ապրեցան այդ նոյն հայուն հաւատքն էր որ տուաւ շունչ դուրս գալու համար այդ արհաւիրքին...: Որպէսզի հայուն կեանքը եւ անոր մշակութային Աւանդը շարունակէ ապրիլ ու ապրեցնել...:

Արմենակ Միսիրեան նոյն այս

Եւ այդ Տէր Զօրի «Անապատի խորան»ին վրայ ան կերտած էր իր հայու հաւատքի կեանքը իր ըման կեանքը նուիրելով մէկ կողմէ գեղանկարչական մշակութիին, բայց նաեւ գրական, երաժշտական ու տակաւին...հոգեւոր առաջնորդութեանը: Արմենակ Միսիրեան դարձաւ Հայ Աւետարանական եկեղեցիի ձեռնադրեալ հովիւ-կղերական՝ եւ ծառայեց իր ժողովուրդին Ֆրանսայի եւ այլ երկիրներու մէջ:

Եւ այս իմաստով Արմենակի կեանքը եւ գործունէութիւնը եղաւ ամբողջական:

Բայց չի դադրեցաւ Արմենակի Տէր Զօրեան հոգեներաշխարհը եւ անոր ապրումները...: Բայց ինչպէս՞ չապրիլ այդ բոլորը...: Երբ տեսած էր թէ ինչպէս՞ Տէր Զօրը դարձած էր «...տառապակոծ հայուն ասաւոր գերեզմանոցը»...: Երբ նոյն Հայը ան քշուած էր որպէս «բարբարոս թուրքին դիւալին ծրագրին միակ պարծանքը»...: Արմենակ «անհուն կակիծով խոցուած» դիտած էր գաղթականութեան «վրաններու քուրջի կտոր պատառները» որոնք «գետնաթաւալ կուտակուած էին ամէն կողմ»: Եւ այդ վրաններուն մէջէն Արմենակ ապրած էր հայուն «Չախ-Չախուած սէրը, հրկիզուած յոյսը ու նահատակուած հաւատքը», որոնք «մոխրակոյտի վերածուած» էին...:

Բայց Արմենակի ապրած այս յեղասպանութեան արհաւիրքը՝ նա-



In Memoriam


գաւակներուն հետ...: Սակայն Տէր Զօրի գեհնէին դիմացած հայ մարդը տեղի չէր տար յուսալքումի...: Եթէ Արմենակ կուտակած էր այս «ուժը», որովհետեւ իր հոգիին մէջ «գծուած» էր մէկ կենդանի «պատառ» իր տեսած ու ապրած Տէր Զօրեան արհաւիրքին...: Եւ այս պատառը «Անապատի խորան»ն է եւ որ ինչպէս Արմենակ նկարագրած է իր բանաստեղծութեանը մէջ «...որպէս անջինջ, աներբ ու յաղթապանձ պատկեր»:

1956 թուականին Արմենակ Միսիրեան պաշտօնական այցելութեամբ մը ոտքը դրաւ Մայր հայրենիք: Ան խանդավառ էր տեսնելով «վերապրող հայը եւ հայրենիքը»: Իր շատ մը պատաստներէն նուիրեց Հայրենիքին եւ որ մինչեւ այսօր տակաւին պահուած եւ ցուցադրուած են: Այցելու-

թեան ետք ան չէր թոյլատրէր որեւէ մէկուն աննպաստ արտայայտութիւններ ունենալ Հայրենիքի մասին: Գանգատողին միշտ կը լիչեցնէր...: «Միթէ դուք մոռցաք՞ Տէր Զօրը...»:

1965 թուականին, Եղեռնի Յիւնամեակին Արմիս իր սրտի մէջի «Անապատի խորան»ը դուրս հանեց որպէս գեղանկարչական հսկայ արուեստի գործեր: Ան պատրաստեց քառասուն պատառ իր ապրած Տէր Զօրեան արհաւիրքին...: Դժուարութիւն չունեցաւ զայն իրականացնելու...: Ապրած էր այդ բոլորը, բայց նաեւ ունէր «ուժը» զայն արտադրելու...: Իսկ «ուժը»...: Ան առած էր այն «խորան»էն, որ իր սրտին ու հոգիին մէջ արմատացած էր իր

Շաբ.ք էջ 18



Deportation

հայուն հաւատքին արգասիքն է որ, վերապրեցաւ: Ատիաման ծնած ու փոքր տարիքէն արդէն հօրմէն որբ մնացած եւ որ ապրեցաւ նաեւ հայուն յեղասպանութեան արհաւիրքը: Եւ ինչպէս ինք կը վկայէ, «կրնամ աչքս գոց վերարտադրել մէն մի արհաւիրքը»: Եւ այդ արհաւիրքին հրաշքով փրկուած Արմենակ եւ իր ընտանիքը կը հաստատուին Իրաքի Մուսուլ քաղաքը, որմէ ետք կը փոխադրուին Հայկապ: Հայկապի մէջ կը սկսի զարգանալ իր նկարչական տաղանդը, ինչ որ կը քաջալերէ զինք մեկնելու Փարիզ, ուր իր նկարչական արուեստի ճամբով կը մասնագիտանայ Սէն Ժիւլիէն եւ Կրան Շոմիէն արուեստի ազատ կաճառներուն մէջ: Եւ կամաց-կամաց կը սկսի թափ առնել Արմենակի նկարչական տաղանդը, ինչ որ շուտով պիտի համնէր միջազգային համբաւի՝ ստեղծելով իր սեփական ոճը եւ ուր կը սկսի գործածել եւ նաեւ ճանչցուիլ իր ԱՐՄԻՍ գեղարուեստական անունով:

Բայց Տէր Զօրը ուրուականի մը նման հալածեց Արմենակը:

Ապրած ու տեսած էր հայուն մահը Տէր Զօրի մէջ: Բայց նաեւ ան վերապրող հայն էր նոյնինքն Տէր Զօրին ու անոր մէջէն: Եւ Տէր Զօրը Արմենակը վերածած էր, ինչպէս ինք կ'ըսէ «խորան»ի եւ որուն վրայ ան կերտած էր իր ամբողջ կեանքը:

Եւ ստեղծած է իր մէջը Հայուն Յոյսը...: «Թուրքին հրեշտին շունչը մարած էր բոլոր կանթեղները, խորանը վերածուած էր մոխրակոյտի եւ փշրուած էր սուրբ խաչը», բայց Հայուն զօրաւոր հաւատքը դարձեալ վերապրեցուց նոյնինքն Հայուն խորանը «...որ կը մնար հաղորդուած իր երակներուն մէջ ժամերգութիւնը ու իր արեան մէջ պատարագը»: Եւ Արմենակ այս բոլորին մէջէն կը ցուցնէ «վառ ու պայծառ Լուսաւորչի Աստղը» որ «աւելի քան երբեք կը շողար...»:

Եւ այդ «շողացող Աստղին» տակ հայ քահանայն Աւետարանը ձեռքին կը պատարագէր ու կը խորհուսէր իր ժողովուրդը երգելով «Տէր Ողորմեա՛, Տէր Ողորմեա՛, անօգնական ազգիս հայոց»...: Եթէ Արմենակ «արտասուքով շարապարած» կ'երգէր այս մեղեդին, բայց նաեւ կը զգար թէ ինչպէս այս «մեղեդին կ'ողողէր անապատի խորանը ու կը շարժէր փշրուած ոսկորները»:

Եթէ Արմենակ ապրեցաւ այս Հայուն խորանը, բայց նոյն այս խորանին Հաւատքը եղաւ իր կեանքին մղիչ ուժը...: Եւ այս ուժին միջոցաւ ան անդադար ստեղծագործեց: Արմենակի յետ-ցեղասպանութեան կեանքն ալ գերծ չէր փորձառութիւններէ...: 1952 թուականին ան կորսնցուց իր կողակիցը եւ մինակ մնաց իր երեք որբ

Welcome to Hovsepian Preschool!
Now Enrolling!

4:1 Student to Teacher Ratio

Nutritious Meals

Armenian and English Curriculum

18 month Joddler Program

For more information, please contact:
Mr. Shahe Mankerian, Principal
Mrs. Kristina Movsessian, Director
kmovsessian@hovsepianschool.org
626.578.1343
www.hovsepianschool.org

ՄԵԾ ԵՂԵՌՆԻ 100-ԱՄԵԱԿԻ ԱՌԹԻ ԵՄ ԵՐԵՎԱՆԻ ԲԱՆԱՍՏԵՂԾ ԴԱՆԻԷԼ ՎԱՐՈՒԺԱՆԻ ՆՈՒԻՐՈՒԹՅԱՆ ԳՐԱԿԱՆ-ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ԶԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ ՊՈԼՍՈՅ ՄԷՋ

Մայիսի 3ին 2015, Պոլսոյ «Քենթ» մշակույթի կեդրոնին մէջ տեղի ունեցաւ նահատակ բանաստեղ Դանիէլ Վարուժանի մահուան 100րդ տարելիցին նուիրուած գրական-գեղարուեստական յիշատակելի երեկոյ մը:

Դանիէլ Վարուժանի յաճախած Ուսումնարանի կեդրոնակաւոր սաները սրահի մուտքին կը դիմաւորէին ժամանողները անմոռուկի կրծքանշաններով:

Հանդիսութեան ներկայ էին կրօնական ժողովի ատենապետ՝ Հոգեթաթուլ Մ. Վրդ. Անուշեան, Շիշլիի փոխ քաղաքապետ՝ Վազգէն Պարբն, ազգային դէմքեր, ինչպէս նաեւ Դանիէլ Վարուժանի ազգականներէն Սերովբէ Զպուքեան եւ Այտա Նշան Գարա:

Տնօրէնուհի տիկ. Սիլվա Գուլմանեան-Մարկոսեան իր բացման խօսքին մէջ ըսաւ. «Այսօր, մենք մեր պայծամներով, կազմակերպեցինք այս ոգեկոչումը, որպէսզի երիտասարդ սերունդը, մեր ուսուցիչները, բոլորս ծանօթ ըլլանք մեր պատմութեան, որպէսզի աւելի զօրաւոր կը թուի մասնանի մեր աշակերտները: Առանց պատմութեան կը նմանինք յիշողութիւնը կորսնցուցած մարդու մը, ժողովուրդի մը»:

Յայտագիրն սկսաւ Դ. Վարուժանի ստեղծագործութիւններէն ընտրուած տողերով: Յետոյ այդ բանաստեղծութիւններուն ընդմէջէն սիւնակեցաւ մեծանուն բանաստեղծի կեանքը «Պարբովի գիտն»ի դրութեամբ եւ Սարին Ապապաշի պատմումով, Վարժարանի հայերէնի ուսուցիչները սկսան պատմել ու խօսիլ 29-ամեայ եղբորաբախտ բանաստեղծի մասին, որ գրական գոհարներ ժառանգած էր մեր ժողովուրդին: Պատմական լուսանկարներն ու տպաւորիչ պատմումներն ընդգրկեցին Վարուժանի համադրութեամբ մը, կը ծանօթացնէին Դանիէլ Վարուժանը, սկսելով մանկութեան եւ դպրոցական տարիներէն, անցնելով համալսարանի ջարդերուն, հասնելով 1915ի մահատիւը թուականը:

Այնուհետեւ յաջորդեց պարային ելոյթ մը, ներկայացուելով աշխարհի անհանգիստ ու փխրուն վիճակը, սկսելով Ա. աշխարհամարտէն եւ հասնելով հայ ժողովուրդի մեծ աղէտին:

Տեսաերիզի վրայ Վարուժանի մասին իրենց խօսքն ըսին Արհ. Լեւոն Արք. Զէքիչեան, Մարք Նշանեան եւ ուրիշներ:

Հաւաքոյթի ամենէն տպաւորիչ մասը Վարուժանի կեանքի վերջին օրուան մասին պատմող ներկայացումն էր (խօսք եւ բեմադրութիւն Պողոս Զալըճըօղլուի): Սոյն ներկայացումը կը կոչուէր «Վատահէք» եւ ցոյց կու տար, թէ՛ ինչպէս Վարուժանի դէպի մահ ջրուած էր 24 Ապրիլի 1915ին:

Հանդիսութեան աւարտին աշակերտները սրահի տարբեր անկիւններէն բեմ բարձրանալով արտասանեցին քառուկներ Դանիէլ Վարուժանի ստեղծագործութիւններէն: Ապա երգեցին «Մայր Արաքսի Ափերով» երգը: Յայտագրի վերջաւորութեան արտասանեցին «Անդաստանը»:

Թաթուլ Մ. Վրդ.-ի փակման սրտապնդիչ եւ հայրենաշունչ խօսքով վերջ գտաւ ոգեկոչման հանդիսութիւնը:

Յայտնենք նաեւ որ այս միջոցաւորման առիթով պատրաստուած էր նաեւ Դանիէլ Վարուժանի մասին պատմող նկարազարդ գեղեցիկ գրքոյկ մը: «Մ...»

ԶԱՄԱՇԽԱՐՅԱՅԻՆ ԸՆԹԵՐՑՈՒՄԻ ՕՐԸ «ԼԱՐՔ»Ի ԶԱՄԱԼԻՐՈՒՄ



ԿԱՐԻՆԷ ՏԷՐ ԳԵՂՈՐԳԵԱՆ

Հայոց Յեղասպանութեան հարիւրամեակը նշող միջոցառումների շարքում իւրայատուկ երեւոյթ էր համաշխարհային ընթերցումի օրը, որ նշանակել էին Պերլինի համաշխարհային գրականութեան փառատօնը եւ Լեփսիսահատու փոքրամը. օրն էր 2015 թուի Ապրիլի 21ը:

Աշխարհի բոլոր կողմերում, այդ նոյն օրը, պիտի կարդային ուսանողները՝ Վարուժան Ոսկանեանի «Շշուկների Մատենանը» վէպի 7րդ եւ 8րդ գլուխները, դա ոգեկոչելու էր Եղեռնի գոհերի յիշատակը եւ պիտի հնչէր իբրեւ զօրակցութեան կոչ՝ մեր Յեղասպանութեան համաշխարհային ճանաչման պահանջին:

Ընթերցման օրոշուած հատուածներում պատկերում են մեր դէմ գործադրուած Եղեռնի սարսափազդու ոճրագործութիւնները, որոնք դուրս են մարդկային ուղեղի պատկերացումներից:

Մամուլում արդէն տրուած էին ընդհանուր մանրամասնութիւնները. բնագիրը թարգմանուել էր 17 լեզուների, 71 երկրների 300ից աւելի մտաւորականներ պատրաստակամ էին մասնակցելու այսօրինակ ընթերցմանը:

Այս մեր տեղեկութիւնների, Լոս Անջելէսի շրջանում Լարք երաժշտական ընկերակցութիւնն էր իր վրայ վերցրել այդ գեղեցիկ պարտաւորութիւնը, որը նաեւ կատարեց՝ նոյնքան գեղեցիկ եւ պատշաճ: «Ապրիլ» գրախանութը եւս պիտի ունենար նոյն ընթերցումը՝ գրքի անգլերէն հրատարակութեամբ:

Չնայած որ ընկերակցութիւնը յաջորդ օրն իսկ ունէր հսկայական համերգ՝ Հայկական ռեքլիմի առաջին ներկայացումը, սակայն ձեռնարկներն իրար չէին խանգարում, միակ անպատեհութեամբ, որ շատ անդամներ՝ տնօրէնի գլխավորութեամբ գտնուած էին UCLA համալսարանում, այդ համերգի գլխավոր փորձին: Այդուհանդերձ, համալիրի «Թրփանեան» սրահում հաւաքուել էին 100ից աւելի ունկնդիրներ:

Ստեղծուած էր կազմակերպիչ յանձնախումբ 14 անդամներից բաղկացած կազմով, որոնք իր լրումին էին հասցրել սկսուած գործը:

Սրահը պատշաճեցուած էր օրուայ խորհրդին. պատերի սեւ պատաստների վրայ տեղադրուած էին մեր նահատակ գրողների եւ մշակույթի գործիչների յատուկ այս առիթի համար պատրաստուած նկարները: Պատ-

րաստուած էր խորան, որի առջեւ 12 մանուկներ յաջորդաբար իրենց մոմերը վառեցին: Կար նաեւ գեղարուեստական յայտագիր. թաւջութակով ելոյթներ ունեցաւ Օշին Մանուկեանը (դաշնամուրի նուագակցութեամբ Ս. Աթասունցի եւ Ա. Տիշիկրիքեանի):

Մեզ համար բաւական «տառապալից» է անուններ թուարկելը, սակայն այս անգամ մեծ գոհունակութեամբ պիտի նշենք մասնակից ուսանողների անունները, որոնք օրուայ երեւոյթն էին, հայութեան ապագայի նկատմամբ մեր որոշ յուսալքողներին քաջալերելու եկած պարման-պարմանուհիները. Լիլիթ Մալումեան եւ Դալար Գէորգեան (Մարի Մանուկեան վարժարան), Արմէն Յովհաննիսեան եւ Նարեկ Պուլտուքեան (Ռոզ եւ Ալէք Փիլիպոս վարժարան), Արի էքմէքեան (Թ. եւ Վ. Մանուկեան վարժարան), Ալէն Տիշիքրիկեան (UCLA համալսարան), Օշին Մանուկեան (թաւջութակ-Լարք երաժշտանոց եւ Colbern դպրոց):

Այս երիտասարդների ընթերցումները, բնական եւ անբռնազօս, լինի դա ուսուցչի կողմից թելադրուած կամ ուղղակի հասկացողութեամբ, փոխարինում էին այս օրերին արտասանուած բոլոր խօսքերին, ելոյթներին, ճառերին. սրանք հայութեան հանդէպ կատարուած խոստումներ էին՝ մեարոպեան լեզուով, մայրենին պահպանողի յանձնառութեամբ:

Թուում ենք նաեւ աւագ ընթերցողների անունները՝ Թագուհի Արզումանեան, Վարդի Դանիէլեան, Կարինէ Տէր Գէորգեան, Թամար Սերայտարեան, Մակի Պապիկեան, Սեւան Տէր Պետրոսեան, Լիւսի Ղազարեան, Եւա Մանուկեան:

Միայն 10 տարիներ առաջ հիմնադրուած Պերլինի համաշխարհային փառատօնը շատ արագ շահել է համակիրների հսկայական բանակ: Նպատակ ունենալով խթանել գրականութեանը, այս կազմակերպութիւնը տարուայ մէջ 1-2 օր նուիրում է համաշխարհային ընթերցումների՝ ջատագովելով հալածուած գրողներին: Այն նաեւ մեծ դեր ունի Հայկական Հարցի լուսաբանումների մէջ:

Իսկ թէ ի՞նչ դեր ունեցաւ Լարք երաժշտական ընկերակցութիւնը՝ մասնակցելով Համաշխարհային ընթերցման այս օրուան, կը պատասխանեն մեր երիտասարդները՝ իրենց ոսկեղնիկ մայրենիով, հայերէն լեզուով:

«ՌԵՔՎԻԵՄ ՆԱՅԱՏԱԿԱՑ ԱԶԳԻՍ ԶԱՅՈՑ»

Շարունակուած էջ 13-էն

կայութիւնը: UCLAի ֆիլհարմոնիկ նուագախումբը, «Լարք»ի հիմնական երգչախումբը, «Ծիածան» մանկական երգչախումբը, մենակատարներ Շուշիկ Պարսումեանը, Կարինէ Աւագեանը, Եղիշէ Մանուշարեանը, Վլադիմիր Զեռնովը՝ դեկավարութեամբ դիրիժոր Նիլ Ստալբերգի առաջին անգամ ներկայացրին Իան Կրաուսի «Ռեքվիէմ» նահատակաց ազգիս հայոց»

պատմական գործը:

Աւարտուեցին յիշատակութիւնների հանդիսութիւնները: Սակայն շարունակուած են մեր պահանջները, մեր յիշեցումները: Իսկ ռեքվիէմը յիշեցնում է մեր ողջ պատմութիւնը՝ սիրով եւ բարութեամբ, մեզ պարգեւուած այս սքանչելի աշխարհում:

Երանի կարենանք դարձեալ լսել այն, սրբագործուել այդ երաժշտութեամբ, ու մեր լինելութեամբ փաստել մեր վերընձիւղուելու կարողութիւնը:

ՎԱՅԱՆ ԹԵՔԵԱՆ

Շարունակուած էջ 13-էն

Փեթոյեանը, որ դրուատեց օրուան ձեռնարկին կարեւորութիւնը գաղութահայ կեանքին նպաստող: ուսանողներուն կողմէ հրամցուեցան «Եկեղեցին Հայկական» երգի վերածուած բանաստեղծութիւնն ու սրինգի ընկերակցութեամբ կատարուած՝ «Քու յիշատակդ այս

գիշեր» գործերը:

Յայտագրի վերջին մասը աւարտեցաւ «Երկնային տաղեր» գոչին՝ Սալբի եւ Սօսի Քերթնեաններուն երէք կտորներու սրինգի ու տաւիղի կատարումով, հմայելով ունկնդիրները:

Գեղեցիկ ու տպաւորիչ այս ձեռնարկը աւարտեցաւ առատ հիւրասիրութեամբ:

ՄԱՍԻՍ
ԱՄԵՆԱՎՍՏԱՅԵԼԻ ԱՂԲԻՐԸ ԶԱՅՐԵՆԻ ԼՈՒՐԵՐՈՒ

ՀԱՅԵՐԸ ԱՅԺԱ ՊԵՏՔ Է ՀԵՏԱՊՆԴԵՆ

Շարունակուած էջ 7-էն

նութեան զոհերը սուրբերու կարգին դասելով: Այս յուզիչ ծիսակատարութենէն ետք, ժամը 19:15-ին, աշխարհի բոլոր եկեղեցիները սկսան 100 անգամ հնչեցնել իրենց զանգերու ղողանջները: Այդ օրը երեկոյեան «Միաթրմ աֆ է տատուն» խումբը Երեւանի Հանրապետութեան հրապարակին վրայ տուաւ անվճար համերգ, որուն մեծ խանդավառութեամբ ներկայ էին հազարաւոր երիտասարդներ՝ հակառակ տեղատարափ անձրեւին: Համերգը կը հեռարձակուէր ուղիղ եթերով՝ Յեղասպանութեան մասին ռոք խումբին ուղերձը տարածելով ամբողջ աշխարհի միլիոնաւոր մարդոց:

Ապրիլ 24-ին Ծիծեռնակաբերդի բարձունքին՝ Հայոց ցեղասպանութեան յուշահամալիրին մօտ, տեղի ունեցաւ ոգեկոչման արարողութիւն, որուն կը մասնակցէին հարիւրաւոր կրօնական առաջնորդներ, դեսպաններ, պաշտօնատարներ եւ Ռուսիոյ, Ֆրանսայի, Կիպրոսի ու Սերպիոյ նախագահները: Երբ երկու գերտէրութիւններու դեկավարները Ապրիլ 24-ին ժամանած էին Երեւան, Թուրքիան, հակառակ իր գործադրած ջանքերուն, չէր յաջողած

նոյն տրամաչափի դեկավարներ ներգրաւել կալիփոլիի ձեռնարկին: Շատ տեղին էր, որ այս մեծաշուք առիթով Երեւանի յուշահամալիրին մէջ հաւաքուած ակնաւոր հիւրերը քանի մը ժամ անցուցին գաղթականներու նման ծածկոցներով փաթթուած՝ ցուրտ եղանակին անձրեւէն պատսպարուելով մեծ ծածկի մը տակ:

Անցեալ շաբաթուան առաւել շշմեցուցիչ զարգացումներէն էր Թուրքիոյ վարչապետ Տաւութօղլուի յայտարարութիւնը, որ հայերու «տեղահանութիւնը մարդկութեան դէմ յանցագործութիւն էր», որ միջազգային իրաւունքի համաձայն՝ հաւասարագօր է Հայոց ցեղասպանութեան ճանաչմանը: Պէտք է զարմանալ, եթէ յանկարծ էրտողանը հեռացնէ Տաւութօղլուն Յունիսին կայանալիք խորհրդարանական ընտրութիւններէն ետք:

Այժմ, երբ հարկաւորեալը մնաց ետեւ, ժամանակն է, որ հայերը շրջեն Հայոց ցեղասպանութեան ճանաչման էջը եւ սկսին համակարգուած կերպով հետապնդել իրենց պահանջները Թուրքիայէն միջազգային, տարածաշրջանային եւ տեղական դատարաններու մէջ:

Թարգմանեց՝
ՌՈՒԶԱՆՆԱ ԱՒԱԳԵԱՆ

ՓՈՒԹԻՆԻ ԱՅՏՆ ՈՒ ԱՍՈՒԱԾ ԵՒ ՉԱՍՈՒԱԾ

Շարունակուած էջ 7-էն

կան տարելից է՝ կապուած Հայոց ցեղասպանութեան՝ մարդկութեան պատմութեան ընթացքում ամենասարսափելի եւ ողբերգական իրադարձութիւններից մէկի հետ», Թուրքիայում իսկական հիստորիա բարձրացաւ: Ապա Ապրիլի 24-ին Ծիծեռնակաբերդ ֆութիլի այցելութիւնը լրացուցիչ թէժացրեց իրավիճակը: Այս օրերին, սակայն, պաշտօնական Մոսկուան մի քանի մակարդակով անընդհատ հաւաստիացնում է, որ ոչինչ չի կարող խոչընդոտել Ռուսաստան-Թուրքիա շարաբերութիւններին, ու դրանք ռազմավարական բնույթի են:

Առանց այն էլ Պաքուն ու Անքարան հիացած չէին ԵԱՀԿ Մինսկի խմբի գործունէութեամբ եւ առիթը բաց չէին թողնում՝ արձանագրելու, թէ Մինսկի խմբին «չի յաջողուած յաջողութեան հասնել», այժմ էլ աւելացաւ Ռուսաստանի ու Ֆրանսայի «անկողմնակալութեան» խնդիրը: Թուրքիայի ԱԳ նախարար Ահմեդ Դաւութօղլուն օրերս նշեց, թէ ֆութիլի եւ Ֆրանսուա Օլանդի՝ Ծիծեռնակաբերդում ներկայ լինելը կը ստուերի Մինսկի խմբի չէզոքութիւնը:

Փութիլի Ապրիլի 22-ի ուղերձում ուշագրաւ միտք էր արտայայտել. «Հայերի եւ տարածաշրջանի միւս ժողովուրդների նոր սերունդները պէտք է ապրեն խաղաղութեան եւ համաձայնութեան պայմաններում՝ չիմանալով սարսափների մասին, որոնց յանգեցնում են կրօնական թշնամութիւնը, ագրեսիւ ազգայնամոլութիւնը ու այլատեսացութիւնը»:

Այս «մեհիջը» պարզ է, թէ ում է ուղղուած: Բայց մինչ ֆութիլի պաշտօնական յայտարարութիւններում արձանագրում է խաղաղութեան հաստատման կարեւորութիւնը տարածաշրջանում, գործնականում ոչինչ չի փոխում Ալիեւի պահուածքում՝ չիման գիծը մշտապէս լարուած պահելու, դիւրեւսին գործողութիւններ իրականացնելու հարցում:

Միւս կողմից՝ Հայաստան-Ռուսաստան շարաբերութիւններում «սառնութեան» ու դրա պատճառների թեման, Հայաստանի կողմից ՌԴ-ին ներկայացուող պահանջների ու դժգոհութիւնների թեման վաղուց սկսուել է ռուսական մամուլում քննարկուել: Օրերս նման մի այդպիսի հրապարակում էլ ի յայտ եկաւ Ռուսաստանեան «Լենտա.ռու» պարբերականում, որում ռուսական կողմը դժգոհում է, թէ որքան են հայաստանցիները «սեւ ու սպիտակով» պատկերացնում Ռուսաստանի հետ շարաբերութիւնները եւ ինչ մեծ ակնկալներ ունեն ՌԴ-ի պարտաւորութիւնների հարցում: Հետաքրքրական է, որ ռուսական քարոզչամեքենան, կարծես, մոնիտորինգի տակ պահելով հայաստանեան քաղաքական ու հասարակական գործիչների՝ ՌԴ-ին ուղղուած մեղադրանքները՝ արձանագրում է, որ թէեւ Հայաստանը դեռ հեռու է «նարնջագոյն լեղափոխութիւնից», բայց... Բայց, փաստորէն, դեռ մտավախութիւններ, այնուամենայնիւ

կան:

Օրերս «Պոզներ» հաղորդաշարի ընթացքում ՀՀ նախագահ Սերժ Սարգսեանը կրկին խօսեց Ռուսաստանի կողմից Ատրպէյճանին սպառազինութիւն վաճառելու թեմայի մասին՝ նշելով, որ Հայաստանը մարտունակ բանակ ունի, եւ թէեւ այդ մարտունակութիւնն ապահովուում է նաեւ ռազմավարական գործընկերոջ շնորհիւ, այնուամենայնիւ՝ «...երբ հայ զինուորը գիտի, որ իր վրայ կրակում են Ռուսաստանից գնած զէնքով, դա շատ ցաւալի է»:

Որքան էլ խուսափեն ուղիղ արձագանքել պաշտօնական Երեւանի կողմից աւելի ու աւելի յաճախակիացող յայտարարութիւններին, պարզ է, որ ռուսական կողմին ինչ-որ առումով այսպիսի յայտարարութիւնները նիարդայնացնում են:

Ինչ վերաբերում է ԵԱՀԿ Մինսկի խումբը համառախագահող միւս երկրին՝ Միացեալ Նահանգներին, ապա եթէ հայ-ամերիկեան շարաբերութիւնները կարելի է բաւական սպաւորիչ գնահատել, ապա ընդդէմ Միացեալ Նահանգների, կարելի է ասել, աննախադէպ բացասական վերաբերմունք է ձեւաւորուել ու շարունակում է խորանալ Ատրպէյճանում: Ատրպէյճանական իշխանամէտ կայքերում յայտնուում են հակամերիկեան հրապարակումներ, ատրպէյճանցի պաշտօնեաները բաց մեղադրում են ԱՄՆ-ին Ատրպէյճանի ներքին գործերին խառնուելու, ընդդիմադիրներին ֆինանսաւորելու եւ գործող իշխանութեանը «ծնկի բերելու» փորձերի ու Ալիեւի իշխանութեանը «վարկաբեկելու» քայլերի մէջ: ԱՄՆ-Ատրպէյճան շարաբերութիւնները, մեղմ սասած՝ ամենալաւ ժամանակները չեն ապրում: Ինչ վերաբերում է Ֆրանսային, ապա Փարիզի «կողմնակալութեան» խնդիրը Ղարաբաղեան կարգաւորման գործընթացում Ատրպէյճանում պարբերաբար են բարձրացրել:

Ահա այս բաւական ծանր միջոցառում կարող է տեղի ունենալ Սարգսեան-Ալիեւ հերթական հանդիպումը, եթէ այն յաջողուի կազմակերպել: Որեւէ մէկը, իհարկէ, չէր համարում, որ բանակցող կողմերն այնքան են մօտեցել ԼՂ հակամարտութեան կարգաւորմանը, որ մնացել էր ԵԱՀԿ Մինսկի խմբի երկրների կողմից վերջնական «շտրիխները» դնել:

Սակայն նկատուում է, որ Ատրպէյճանի վերաբերմունքը ԵԱՀԿ Մինսկի խմբի երկրներից իւրաբար է, միւս կողմից՝ ԱՄՆ-ի, Ֆրանսայի ու Ռուսաստանի տրամադրութիւնները Հայաստանի եւ Ատրպէյճանի նկատմամբ էական փոփոխութիւնների են ենթարկուել: Եթէ ԱՄՆ-ի ու Ֆրանսայի կողմից պաշտօնական Երեւանը գոնէ որպէս բանակցող կողմ կանխատեսելի գործընկեր է, ապա նոյնը չի կարելի ասել Ատրպէյճանի դէպքում: Թւում է՝ Ատրպէյճանի «թիկունքը» ԵԱՀԿ Մինսկի խմբում այսօր առաւելապէս Մոսկուան է պահում:

Լուսանկալքը՝ «ՌԻԱ Նովոստի» գործակալութեան «Առաւօտ»

ՈՒՆՏԻ ՀԱՐԻՐԱՄԵԱԿ, ՅԵՏՈՅ ԻՆՉ

Շարունակուած էջ 8-էն

թեան ու աշխարհաքաղաքական (geopolitical) նոր փոփոխութիւններու բերումով՝ հայ եւ թուրք ժողովուրդները պիտի կանգնին իրարու դէմ յանդիման, եւ պիտի առերեսուին իրենց դառն պատմութեան հետ ու պիտի փորձեն լուծել հողային պահանջներու եւ իրաւունքներու հատուցման հարցը: Ինչ պէտք է ընենք այս հանգրուանին՝ պատրաստ ըլլալու համար գալիքին, որպէսզի անակնկալի առջեւ չգտնուինք, երբ առիթը ներկայանայ: Յաջողութեամբ պիտի ներկայացնենք եւ վերլուծենք ներքեւ առաջադրուած մեր մտահոգութիւնները, որոնք կը բխին համազգային այժմէական մեր մտահոգութիւններէն:

1. Հողային Պահանջ
2. Վերաբնակեցում
3. Արտագաղթ
4. Ժամանակավրէպ Կուսակցութիւններ
5. Արտասահմանեան Ազգային Ժողով
6. Եկեղեցւոյ Միութիւն
7. Քրտական Հարց
8. Թուական Աճ
9. Իսլամացած Հայեր

Միջազգային ժողովներու եւ օտար ցեղասպանագէտ հեղինակութիւններու կողմէ անաւարկելի կերպով հաստատուած ու պատմութեան էջերուն մէջ արձանագրուած անժխտելի իրողութիւն է Օսմանեան պետութեան գործադրած ցեղասպանութիւնը, որուն ժառանգորդն է այսօրուան թուրք պետութիւնը, եւ ինչ որ ալ ըլլան Թուրքիոյ կողմէ յառաջ քշուած չքմեղանքը՝ որպէս թէ հայութեան տեղահանութիւնը պատերազմական գործողութիւններու անհրաժեշտութենէն կը բխէր, եւ զանազան ա՛յլ յերիւրածոյ ու բռնաբռնակի բացատրութիւնները, ատոնք չեն կրնար արդարացնել հայոց նկատմամբ կանխատեսուած, ծրագրուած եւ գործադրուած ցե-

ղասպանութիւնը:

Կարեւորը այն է որ ո՛չ մէկ միջազգային մարմին կամ ժողով կամ իրաւական ատեան ուրացած է մեր արդար իրաւունքները, թէկուզ քաղաքական նոր բարդութիւններու հետեւանքով մեծ պետութիւններ անցեալին դաւանանքին Հայ ժողովուրդին եւ ձախողութեան մատնեցին Սեւրի խտտումները ու նոյնպէս վարուեցան նաեւ Լօզանի դաշնագրի պարագային: Հակառակ այս բոլորին, մեր եւ գալիք սերունդներուն վիճակուած է սրբազան պարտականութիւն մը -տէր կանգնիլ մեր իրաւունքներուն, անդադրում հետապնդել մեր ժողովուրդի հողային արդար դատը եւ իրագործել մեր ազգին երազը:

Որպէս հողեղէն մարդ արարած, չենք կրնար երբեք մոռնալ անցեալը եւ մեր անմեղ ժողովուրդին նահատակութիւնը, նոյնիսկ եթէ մեր հայրենական հողերն ու հարստութիւնները վերադարձուին մեզի: Այսօր՝ աւելի քան հազար հինգ հարիւր տարիներ անցած են վարդանանց պատերազմէն եւ տակաւին երկիւղածութեամբ կը յիշենք զանոնք եւ կը խոնարհինք անոնց նահատակութեան ու յիշատակին առջեւ. հետեւաբար կասկածէ վեր է որ յաջող դազարամեակին անպայման պիտի յիշենք մեր մէկուկէս միլիոն նահատակները եւ պիտի չմոռնանք անոնց քաղաքական կտակը:

Մեր աւագ պարտականութիւնն է աշխարհի պետութիւններուն ընդունիլ տալ, ճանչցնել ցեղասպանութիւնը եւ իրենց գործակցութեամբ գործադրել տալ ՄԱԿ-ի Ուխտին մէջ սահմանուած պատիժները: Բայց այս բոլորէն վեր կը մնայ բացարձակ ճշմարտութիւն մը -հաւասարի հարիւր տարի անցած է արիւնարբու Թուրք մարդասպանի յոխորտանքէն ու մենք տակաւին կ'ապրինք, կը ստեղծագործենք, կը կերտենք ու կը բարգաւաճինք:

Թուրք դահլճները, Թալէաթները, սխալեցան եւ պարտուեցան իրենց յոխորտանքին մէջ. մենք

կանք, կ'ապրինք ու պիտի ապրինք, որովհետեւ մեր ժողովուրդը ցեղասպանութեան մոխիրներէն յարուստիւն առնելով վերակաած է իր յաղթարշաւին, եւ ո՛չ մէկ ոյժ կրնայ դադարեցնել կամ կասեցնել մեր յառաջընթացը: Ի վերջոյ հայ ժո-

ղովուրդը պիտի կարողանայ ամբողջացնել իր սրբազան առաքելութիւնը եւ պիտի վերատիրանայ իր պապեանական հողերուն, հոն համախմբուելու եւ ստեղծագործելու համար անկաշկանդ կերպով:
(Շար. Ա.)

25 ԱՊՐԻԼ 2015-ԻՆ՝ ՊԱՅՔԱՐԻ ՆՈՐ ԴԱՇՏ

Շարունակուած էջ 6-էն

Թէ քաղաքական դէմքերը պարտին զիտնալ, որ իրենք պարտականութիւն մը կատարածի հոգեկան բաւարարութեամբ պէտք է գոհանան, այլ արդարութեան վերականգնումը ամբողջական է, ու կարելի է գոհանալ մասնակի կամ անճիտուած արդարութեամբ:

Նո՛յն այս մտահոգութիւնը նոր հարիւրամեակի սեմին՝ 24 Ապրիլ 2015-ին կը դրուի հայ ժողովուրդին պարագային: Մենք եւս, ազգովին, պարտինք գիտակցիլ, որ Յեղասպանութեան միջազգային ճանաչումը եւ նոյնիսկ Թուրքիոյ կողմէ Հայոց ցեղասպանութեան ճանաչումն ու տակաւին ներողութեան խնդրանքը բաւարար չեն եւ մեր պահանջներուն մէկ մասնիկն են միայն:

Յեղասպանութեան ճանաչումն ու ներման հայցը պարզապէս երկար պայքարի հանգրուաններն են:

Երկրորդը՝ հատուցման խնդիրն է, ու աւելի կարեւորը: Հատուցում՝ կատարուած Յեղասպանութեան, իր մարդկային, բարոյական, նիւթական երեսներով: Սակայն հատուցումը, ընդհանրական խնդիր է ու ոչ անհատական: Թուրքիան կրնայ օրինական ճամարտակութիւններով պատրաստակամութիւն յայտնել անհատական մակարդակի հատուցում կատարելու: Պահանջը հաւաքական հատուցման խնդիրն է, Յեղասպանութեան ճանաչման առընթեր կամ անկէ անմիջապէս ետք:

Ու վերջապէս, հողային հատուցման պահանջ. ճանաչում, ներումի հայցը, հատուցում՝ կարեւոր ու անհրաժեշտ նախադրեալներ են: Հիմնականը սակայն գրաւեալ հողերու վերադարձն է, որպէսզի ամբողջական ըլլայ արդարութիւնն ու հատուցումը ըլլայ մէկտեղէ միլիոն նահատակներու եւ նոյնքան թիւով հայերու տեղահանութիւնն ու հայրենագրկումը:

Ու դեռ, մտածել եւ հաւատալ, որ խնդիրը հողերու վերադարձէն անդին հայկական գրաւեալ հողերու ազատագրումն է:

Հայոց ցեղասպանութեան հարիւրամեակին Թուրքիան կը պատրաստուի հայութեան ծրագիրները ձախողութեան մատնել եւ այդ ուղղութեամբ պետական մակարդակով ամէն տեսակի եւ ուղղութեամբ սադրանքներ ծրագրել եւ գործադրել Թուրքիոյ մէջ Թէ հայկական գաղութներու դէմ, շրջանային Թէ միջազգային շրջանակներու մէջ, ընկերային, տնտեսական, մշակութային Թէ քաղաքական բոլոր մակարդակներուն վրայ:

Ու ճիշդ հոս կը կայանայ վաղուան համար մեր պատրաստուածութեան, կանխատեսութեան ու ծրագիրներու խնդիրը:

Մէկ խօսքով դիմադրողականութեան ամբացումը:

Թուրքիան, էրտողան Թէ ուրիշներ, կրնան շարունակել մեղրածորան յայտարարութիւններ կատարել: Կրնան բառային շարահիւստութիւններով բարեկամական ողջոյններ յղել ցաւող հայ ժողովուրդին: Կրնան անհատական ինչքեր ու եկեղեցական կալուածներ վերադարձնել անհատներու: Պետական նախաձեռնութեամբ, բարձրաձայնուած կամ լուռ կերպով Թուրք պաշտօնատարներ կամ քաղաքացիական ընկերութեան մէջ թիւում անհատներ հայութեան սրտին խօսող մատուցումներ կատարել: Այո՛, Թուրքիան կրնայ տակաւին իր քանդած եկեղեցիները վերանորոգել, պարբերաբար պատարագ մատուցելու արտօնութիւններ տալ, նոյնիսկ թրքական հպատակութիւն «շնորհել» նախկին օսմանցի հայ հպատակներուն ու անոնց արտօնել վերադարձ իրենց բնակարանները: Կրնայ շարունակել հայ եւ Թուրք բարեկամական խմբակներ յառաջացնել, մղել, որ Թրքական քաղաքացիական կազմակերպութիւններ Յեղասպանութեան նիւթով գիտաժողովներ կազմակերպեն ու հայեր հրաւիրեն:

Ու դեռ, պիտի փորձէ սիրաշահիլ հայկական ձայներ ու ցոյց տալ համայն աշխարհին իր «քաղաքակիրթ» երեսը:

Այս բոլորը, որպէսզի յաջողի որեւէ լուրջ գիշումէ առաջ բնականոնացնել հայ եւ Թուրք յարաբերութիւններն ու հայ եւ Թուրք ժողովուրդներու խաղաղ ու միասնաբար ապրելու «իրողականութիւնը»՝ պարպելու համար հայոց պահանջատիրութիւնը եւ յաջողցնելու հայութեան մէջ ներքին թշնամիներ ստեղծելու իր անցեալի քաղաքականութիւնը:

Միւս կողմէ, Թուրքիան պիտի շարունակէ հարուածել Հայաստանը, Արցախն ու սփիւռքը:

Ու եթէ երբեք Հայաստանին եւ Արցախին կապակցաբար արդէն իսկ 25 տարիներու թրքական քաղաքականութիւնը յաւելեալ բացատրութեան չի կարօտիր, իր շրջափակումով, Ազրպէյճանի տրամադրուած գինուորական Թէ տնտեսական բացառիկ նեցուկով, Արցախի դէմ ազրպէյճանական գինուորական յարձակումներու մատակարարումով Թէ դիւանագիտական գորակցութեամբ, ապա սակայն իրենց իսկ կողմէ «սփիւռքը տարբեր է» կոչուած հայկական սփիւռքը եւս Թրքական սադրանքներուն մէջ պիտի ունենայ իր հիմնական չափաբաժինը: Պարտինք ակնկալել, որ Թուրքիան ներկայ պիտի ըլլայ գալիք հանգրուանին մեր գաղութներուն մէջ կայացող նախաձեռնութիւնները ի գին ամէն բանի խանգարելու դիրքերուն վրայ: Պիտի փորձէ խոչընդոտել զանոնք՝ նուազագոյնը: Պիտի փորձէ հարուածել հայ քաղաքացիներու յարաբերութիւնները իրենց պետութիւններուն հետ: Պիտի ուզէ անպայման տարտղնուած տեսնել յատկապէս ցարդ գոյատեւող Միջին Արեւելքի հայութիւնը եւ մինչեւ իսկ ճիգ պիտի չխնայէ ուժասպառ ընելու զայն:

Երկրորդ հարիւրամեակին, նոր ուժգնութիւն կը զգենու հայութեան պահանջատիրութիւնը:

Նոր ուժգնութիւն, նոր հորիզոններ ու նոր թիրախներ պիտի ունենայ հայութեան դէմ պայքարող Թուրքիան:

Մեր պարտաւորութիւնն է եւ իրաւունքը՝ դիմադրել Թուրքիոյ: Կարելի բոլոր, բոլոր՝ միջոցներով ու անկարելին ալ կարելի դարձնելու որոշումով:

Միշտ վերանորոգ դիմացկանութեամբ:

Միասնական ճիգով, Հայաստան եւ սփիւռք:

Նոր դիմադրողականութեամբ:

Մինչեւ արդարութեան վերականգնում:

Մինչեւ հողերու ազատագրում եւ մէկ ու ամբողջական Հայաստանի վերընձիւղում:

25 Ապրիլ 2015-ին՝ պայքարի նոր դաշտ:

ՊԱՏՄԱԿԱՆ ԱՐԴԱՐՈՒԹԻՒՆԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՔՐԱՄԱՅԱԿԱՆԸ

Շարունակուած էջ 6-էն

սառցալեռան միա՛յն տեսանելի այն մասն է, որուն կործանարար ուժին պիտի բախի Թուրքիան հայերու կողմէ թմբկահարուող Յեղասպանութեան հարիւրամեակի օրերուն: Մենք պարտաւոր ենք ամէն կերպ մեղմացնել այդ հարուածը, իսկ ատոր համար հայերուն հետ լեզու պէտք է գտնել»:

Բնականաբար այստեղ եւս չափէն աւելի բարձր է քաղաքական աճապարարութեան եւ աժան դիւանագիտական խաղին տոկոսը, որովհետեւ անոր խօսքը ուրացման ճամբէն հրաժարելու եւ ճշմարտութիւնը դիմագրաւելու մասին չի վերաբերիր, այլ ընդամենը՝ «հայերու հետ լեզու գտնելու»: Իսկ Թէ ի՞նչ կը նշանակէ «լեզու գտնել»՝ թրքական դիւանագիտութեան, առաւել եւս Թուրք կուսակցապետի մը համար, ըստ մեզի, մեկնաբանութեան չի կարօտիր:

Այս առումով, խորապէս համոզուած ենք, որ ճիշդ ժամանակին ու տեղին էր Հայոց ցեղասպանութեան 100-ամեակի Համահայկական հռչակագրին հրապարակումը:

Խորհրդանշական է, որ Հայաստանի Հանրապետութեան նախագահ Սերժ Սարգսեան, ի լուր աշխարհի, Հայոց ցեղասպանութեան 100-ամեակին նուիրուած ձեռնարկները համակարգող պետական յանձնաժողովի նիստի աւարտէն ետք կարդաց գայն:

Կարդաց ո՛չ Թէ նախագահական պալատի կամ այլ պաշտօնական դահլիճի մէջ, այլ Միծեռնակաբերդի՝ Յեղասպանութեան գոհերու յիշատակին նուիրուած յուշահամալիրին առջեւ, անմեղ նահատակներու յուշարձանին ծաղկեպսակներ զետեղելէ եւ անոնց սուրբ յիշատակին խնկարկելէ ետք:

Հայ ժողովուրդը, ըսուած է Հռչակագրին մէջ, կը դիտարկէ Հայոց ցեղասպանութեան 100-րդ տարելիցը իբրեւ կարեւոր հանգրուան՝ պատմական արդարութեան համար մղուող պայքարը «Կը յիշեմ եւ կը պահանջեմ» լողունգով շարունակելու հոյովոյթին մէջ:

Կոչ կ'ընէ հայրերին երու գալիք սերունդներուն՝ հայրենասէր, գիտակից եւ ուսեալ կեցուածքով պաշտպան կանգնելու հայրենի սրբազան ժառանգութեան, աննահանջ պայքարով ծառայելու յանուն՝

- Աւելի հզօր հայրենիքի՝ ազատ եւ ժողովրդավար Հայաստանի Հանրապետութեան,
- Անկախ Արցախի յառաջընթացին ու գորացման,
- Աշխարհասփիւռ հայութեան գործօն համախմբման,
- Համայն հայութեան դարաւոր նուիրական նպատակներու իրականացման»:

Աշխարհասփիւռ հայութեան բոլոր ուժերու համատեղ ջանքերով ստեղծուած պատմական այս հռչակագիրը սկիզբն է հայոց արդար պահանջատիրութեան որակական նոր հանգրուանին, եւ բոլոր նախադրեալները կան, որ ան վերջինը ըլլայ մեր հարիւրամեայ պայքարի ընթացքին:

Ասիկա ո՛չ միայն ցանկութիւն, այլ պատմական արդարութիւնը վերականգնելու հրամայական է, եւ մեր ժողովուրդի հաւաքական ուժին գերագոյն նպատակն է օր առաջ մօտեցնել բաղձալի այդ ժամանակները:

«ԱՆԱՊԱՏԻ ԽՈՐԱՆԸ...»

Շարունակուած էջ 14-էն

ապրած «Անապատի» արհաւիրքի այդ օրերէն ...: Արմիս քառասուն պատառներու նկարաշարը կոչեց «Յեղասպանութիւն»...:

Եւ այսօր 2015ին, Յեղասպանութեան հարիւրամեակին նկարաշարը տակաւին գորաւոր կերպով կը խօսի: Վերապատուելի Արմենակ Միսիրեան մահացաւ 1977ին, Ֆրանսայի մէջ...: Անոր սրտին մէջ միշտ մնաց «Անապատի Խորան»ը: Այն «Խորան»ը որ իրեն տուաւ կեանք եւ ալ աւելի կեանք...: Եւ այս այն «Խորան»ն է որ Արմենակ նկարագրեց իր գրութեանը վերջին նախադասութեանը մէջ որպէս «...յաւիտենական»: Եթէ «...անագորոյն ժամանակի վազքը ու հեւքը մոռացութեան վիհը նետեց պատառներուս մէկ

մասը ու արեւին ճաճանչները աւաղ խլեցին վառ երանգներս, որոնք դաշնաւորած էի հողիէս պատառներու վրայ, սակայն միակ պատառը որ կայ ու կը մնայ յաւիտենապէս հողիս սրբարանին մէջ ատ ալ Անապատի Խորանն է»: Այս «ՅԱԻՏԵՆԱԿԱՆ ԽՈՐԱՆ»ը եթէ մէկ կողմէ կը յիշեցնէ Հայուն «Արհաւիրքը» բաց նաեւ անոր «Աւանդը»: Ու տակաւին այս «Աւանդին» պահպանումը եւ պահանջատիրութիւնը...: Եւ այս «Անապատի Խորան»ն է եւ անոր կերտած «հաւատքը», որ հայուն տուաւ ուժը ապրելու եւ ստեղծագործելու: Հարիւրամեակ ու տակաւին անդին...:

«Անապատի Խորան»ը...: Արմիսը՝ Արմենակ Միսիրեանը ապրեցնողը, բաց անպայմանօրէն ողջ Հայութիւնը...:

ՍԱՅԱԿԵԱՆԻ ՕՐ

Սահակեան Սանուց Միութիւնը յատուկ յիշատակի ցերեկոյթ կազմակերպած է յաւէտ բաժնուած իրենց սիրելի տնօրէն եւ ուսուցիչ՝ Տիար Պէպօ Միմոնեանի մահուան քառասունքի, վաստակաւոր ուսուցիչ՝ Տիար Յովհաննէս Հաննէսեանի երկրորդ տարելիցին, ինչպէս նաեւ, իրենց վարչական անդամներ՝ Տիար Նազարէթ Աջապահեանի եւ Տիար Վարդիվառ Շնորհաւորեանի առաջին տարելիցներուն առիթներով: Հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Փասատինայի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ, Կիրակի, 17 Մայիս, 2015ին, որմէ ետք Սահակեանցիներով պիտի մէկտեղուինք Փասատինայի «Սողանալեան» սրահին մէջ, 1060 North Allen Avenue, Pasadena CA 91104:

ՎԱՐՉՈՒԹԻՒՆ



LARK

Lark Musical Society
Լարք Երաժշտական Ընկերակցություն

Presents

anoush

O P E R A

L O S A N G E L E S

Armen Tigranian

Four performances only
May 23, 24, 30, 31, 2015
7:00 p.m.

May 23 and 31
Anoush: Hasmik Papyan
Saro: Yeghishe Manucharian
Mossi: Boghos Biazbekian
May 24 and 30
Anoush: Shoushik Barsoumian
Saro: Berj Karazian
Mossi: Arshak Kuzikyan
and a large cast of soloists, chorus and orchestra.

Directed by: Hovhannes Hovhannessian
Artistic Director: Vatsche Barsoumian

The Ambassador Auditorium
131 South St. John Avenue,
Pasadena, CA 91105



1915-2015
Centennial of the Armenian Genocide

